№ 84 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ԱՊՐԻԼԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . . . 6 ռուբ.
Ամսական . . . . . 1 ռուբ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յիսուսաղայ որևէ ամսի վերջին։

Ապրիլի մէկից մինչև տարւայ վերջը արժէ 9 ռուբլի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԻ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԵԿ (կարելի է և մարկանոցով) և նշել հասցէն, առանց որի գիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՎԱՆՔ։

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ **1916** ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ԱՊՐԻԼԻ № 84

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵՋԻՈՎ.—1-ին երեսի վրայ տողին (պատիւ) 10 կոպ., հովկասեան դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., հովկասից դուրս՝ 10 կոպ.։

ԱՅԼԱԶԳԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 9—3 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Горизонъ", Сологаевская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57. կամ Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐԻԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատում տեղի են ունենում մասնակի ռազմական ընդհարումներ։

Կովկասեան ճակատում ռուսները յետ են մղել Թիւրքերի յարձակումները Երզնկայի և Դիարբեքիրի ուղղութեամբ։

Բոսֆորի մօտ ռուսաց սուզանաւը խորտակել է մի շոգենաւ և մի առագաստանաւ։

Միջագետքում գեներալ Տաունսենդը Կուտ-էլ-Ամարայում անձնատուր է եղել Թիւրքերին 10,000-ոց բանակով։

Վերդենի մօտ գերմանացիները փորձում են նորից յարձակուել, բայց նրանց գործողութիւնները չունին առաջուայ ոյժն ու յամառութիւնը։

Դուբլինում ապստամբների մեծ մասը գերի է բռնուած։ Ապստամբութիւնը հետզհետէ կորցնում է սրութիւնը։ Մնացած Իրլանդիայում դրութիւնը գոհացուցիչ է։

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը յայտնում է, որ ապրիլի 19-ին, երեքշաբթի օրը, ցերեկուայ ժամը 12-ին, Վանքի մայր եկեղեցում կատարելու է նոյն դպրոցի բարերար, հանգուցեալ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

Հոգեհանգստեան կարգը։

434 1—1

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ

ԵՂԲ. ԵՖԻՄՈՎՆԵՐԻ ՑԻՐԿԸ

Երեքշաբթի, ապրիլի 19-ին կը ցուցադրւի **մեծ կլոռնային ներկայացում,** բաղկացած 3 մեծ բաժիններից, իսկ 19-ին՝ ընտրոյի նոմերներ։ Այսօր երկրորդ անգամ դուրս է գալու ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՏԻԿՆԻԿ՝ (մարդ-մեքենայ)—XX-րդ դարու հանելուկը։ Դերբիւտ անդուգական կլոռն-երաժիշտներ՝ պ. պ. Ռոդեստիի և Գոլպեշիի, որոնք կատարելու են նոր նոմերներ։ Այսօր պ. ՂԱՄԲԱՐՈՎԸ կը կատարէ համաշխարհային ռեկորդ Թռիչքներ՝ միաժամանակ երկու փակ կառքերի վրայով։ Դերբիւտ եղակի ՀՐԱՇԵՒ ՖԵՆՈՄԵՆ պ. Բերտոնիի։ Այսօր մասնակցում են—ՍԳԻՏԱԿ ՄԱՐԴԻԿ, Հաստատութեան սիրելի պ. Կուբանսկի կը կատարի նոր ռեպերտուար և այլն և այլն։

Սկիզբը երեկ. ժ. 8 և կէսին։ Կասսան բաց է՝ առաւ. ժ. 11—2, երեկ. 5-ից մինչև ներկայացման վերջը։ Դները սովորական են։ 456 1—1

էլեկտրո- „ԼԻՐԱ" Թատրոն

Այսօր նոր և հետաքրքիր Ծրագիր

Խոշտանգուած Լեհաստանի Աղջիկը

Դրամա 4 մեծ մասերից, ժամանակակից պատերազմական կեանքից։ «ՌՈՒՍ» կինեմատոգրաֆիական, ֆաբրիկայի արտադրութիւն, բեմադրութեամբ Մոսկուայի ՆԵԶԼՈԲԻՆԻ թատրոնի ռեժիսեօր Ա. Ա. ՉԱՐԳՈՆԻՆԻ, մասնակցութեամբ Բախմատեւսկոյի, տիկ. Գորդինի, տիկ. Ա. Վերլէնի և Կրեչետովի։

ԱԶԴ.—Մօտիկ օրերս ամենայն սեանսից յետոյ բեմ է դուրս գալու փոքրաքանակ կոմիկ-արտիստ ԲՈՒԲ։ 933 0—15

ԻՆԺԵՆԵՐԱՅԻՆ-ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ԿՈՄԻՏԷ

Զօրաբանակի մատակարար՝ Հայաստանում. Զեմստուային և Քաղաքների Միութիւնների Գլխաւոր Կոմիտէին կից։

ՊԱՀԱՆՋԻՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

Ինժեներային-Կառուցողական Դրուժինների համար։ Բանուորներ, հիւսներ, սղոցողներ, գետնափորներ։ Վարձատրութիւնը՝ 1 ռ. 20 կ.—3 ռ., բնակարան, պատրաստի ուտելիք, ճանապարհածախսը Կոմիտէի հաշուին։ Վարձատրութիւնը մեկնելու օրից։ Ճանապարհին ուտելիքի համար օրական 50 կոպ.։

Ընդունելութիւնը ամեն օր՝ ժամը 10—12-ը ցերեկ., Կոմիտէի շէնքում, Մաղաստովսկի փող. № 5 (պատ. Նախկին շէնքում)։ 959 5—1

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Գլուխ. ոսկուց, արծաթից, ֆարֆորից. ատամի հեռ. առանց ցաւի։ Արհեստ. ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործեալ մեթոդով։

Ընդուն. 10—2-ը ցերեկ., 4—7 երեկ.։ Լերմոնտովսկայա փող. № 1, մուտքը պերեուլկից։ 936 100—16

Թիֆլիսի Քաղաքային Աղքատաբուժարանի ատամնաբոյժ դոկտոր

ՍՈՓԻԱ ՄԻՐԶՈՅԵԱՆ

Ընդունում է ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ունեցողներին ամեն օր 1½—3 ժամը։ Սերգէևսկ. փող. № 1, հեռախօս 16—67 41 50—41

Կը ծախւին հինգ հատ ստալեարի նոր

ՎԵՐՍՏԱՖՆԵՐ

Դիմել. Լազարևսկայա փողոց, № 57, առաւ. ժ. 8-ից մինչև երեկ. ժ. 7-ը։ 447 3—2

Բ Ա Ժ Ի Ն Կ

Բ. Գ. ՆԱՐԻՄԱՆՈՎ

Վենեռական, կաւի, սիֆիլիս և ճրագց հեռեռաբեթերը։ Բուժում «606» և «914» պրեպարատներով։ Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր երեկ. ժ. 5½-ից մինչև 8-ը։ Միքայէլեան փող., № 33, 38 Հեռախօս 16-17. 100—84

ՎԱՅՐԿԵԱՆԻ ԽՈՀԵՐ

VI

Մրցման տեղը

Այո—նապոլէոնեան աշխարհակալութեան տենչանքը։ Նրանով վառած էր դեռ 50 տարի սրանից առաջ այն չարաշուք հանճարը, որ դարձնեց պրուսա-գերմանական պետութիւնը արեան ու երկաթի ճանապարհով... հաւատելով Դանիային, ջախջախելով Աւստրիան Սադովայում, ջախջախելով ու յոշտելով Ֆրանսիան։

Նիչչէական «իշխելու տենչը» իր բարձրագոյն արտայայտութիւնն էր գտել Բիսմարկի մէջ, որ 1870-ից յետոյ ևս՝ դեռ պարբերաբար յղանում էր հակաֆրանսիական արշաւանքի ծրագիրներ—1875-ին և 1887-ին—մինչև որ չընկաւ իր տիրական բարձունքներից՝ մի այլ փառատենչ մէգալոմանի—այժմեան կայսրի—ինտրիգներով։

Վերջինը հալածեց Բիսմարկին, բայց բնաւ չհալածեց նրա ոգին։ Երկար ժամանակ խրեց նա Եւրոպայի հանրային կարծիքը, ներկայացաւ, որպէս խոյանան-առաջամարտիկ համաշխարհային խաղաղութեան, բայց իրօք միշտ էլ որոճում էր Նիչչէի խօսքը... «Der Wille zur Macht!

Բիսմարկ Քողել էր մի նուիրական կապակ, որի տարին հաւատարիմ մնաց Գերմանիան, գլուխ ունենալով Հոհենցօլլերնեան արքայատոհմը։ Բիսմարկ նիւթել էր միլիտարիզմի սիստեմ-պատուհասը և յաջորդները անդուլ մըշակեցին, կատարելագործեցին այն։ Բիսմարկ առաջ էր տարել իր ծրագիրները, առանց խորութիւն դնելու միջոցների մէջ, հեռագիրներ կեղծելով, բարբարոսութիւններ նիւթելով, մարդկային իրաւունքները ոտնահարելով անգթօրէն և ցինիկօրէն։ Յետնորդները աւելի ևս պինդ գրկեցին ցինիզմի ու վայրագութեան աւետարանը և կիրառեցին այն՝ անլուր, անօրինակ չափերով Հայաստանում ու Բելգիայում...

Բոլոր միջոցները սուրբ էին նպատակի համար, իսկ այդ նպատակը միշտ նոյնն էր մնում՝ ոչ թէ «տեղ գրաւել Արեգակի տակ» («Platz an der Sonne»),—Հոհենցօլլերնեան բարբառով—այլ ծաւալել ու ծաւալել դէպի բոլոր հորիզոնները։

Տնտեսական անհրաժեշտութիւն... Նեամոդական տենդը զտնում է միշտ ամուր նեցուկ բարձր, արդիւնաբերող դասակարգի մէջ, որ կարիք ունի միշտ նորանոր հրապարակների՝ իր յարամուն արդիւնքները շահեցնելու համար։ Բայց այդ դասակարգը Գերմանիայում ունէր արդէն իր պատկառելի «տեղը Արեի տակ», նրա առջև բաց էին ոչ միայն լայնածաւալ շահաստանները Գերմանիայի, Աւստրիայի, Ռունգարիայի, Ռուսաստանի, Բալկանների, Թիւրքիայի, վերջապէս գերմանական աֆրիկեան գաղութների, այլև բաց էր նրա առջև բրիտանական համաշխարհային Շահաստանը, ուր վաղուց կերբաւում էր Անգլիայի կողմից «բաց դռների» քաղաքականութիւնը։

Ասում են Գերմանիայի ազգաբնակութեան անման մասին։ Բայց ինչպէս որ գերմանական ապրանքներն էին հեղեղում դրսի աշխարհը, այնպէս և գերման ազգաբնակութիւնն էր ազատօրէն յորձանք տալիս դէպի աշխարհի չորս բոլորը։ Ցամաքային դէպս, Գերմանիայի ժողովրդի համար բացարձակ անհրաժեշտութիւն չէր նոր գաղթավայրերի նուաճումը և նրա լաւագոյն զաւակները—Բէբել, Լիբկնեխտ, Աուէր և այլն,—տասնեակ տարիներից ի վեր խարանել են Ռայխստագի ամբիոնից «գաղութային բաղաքականութիւնը» և մերժել են ազգի դրամը նեանոզական ամեն տեսակ մեծամարդկների համար։

Տնտեսական անհրաժեշտութիւնից աւելի՝ ներկայ դէպքում դեր ունէր մրցման տենդը, որ հասել էր իր բարձրագոյն գագաթնակէտին Գերմանիայի իշխողների մէջ, մրցման տենդը ազատարի տիրապետութեան կրկէսում... այն աշխարհի՝ որի լաւագոյն պատառները վաղուց ի վեր մաքսել է արդէն Մեծ Բրիտանիան, մի բուռն ժողովուրդ, թառած հեռաւոր ու մենաւոր կղզի վրայ, իր «վեհապանծ մեկուսացման» մէջ... Ի՞նչ խօսք, որ այդ համաշխարհային տիրապետութեան դափնիները հանգիստ չէին տալիս պանգերմանիզմի ռանվիրանների, որոնց աչքում Գերմանիան—թէև աւելի ուժեղ քան Անգլիան և բանակով առաջինը երկրագնդի վրայ—հանդիսանում էր և ամենից քաղաքակիրթը, ամենից աւելի և ամենից լաւ արդիւնաբերողը, ամենից վարպետ կազմակերպողը և մինչև իսկ... ամենից ազատասէրն ու մարդասէրը։

Դափնիները պէտք է, հարկաւ, պատկանեն ազգերից ընտրեալագոյնին... Եւ այդպիսին էր գերմանացին։ Այդ համոզումն էր մշակել ամբողջ երկրի մէջ պրուսական դպրոցը՝ Հոհենցոլլերների գերազոյն դեկավարութեան տակ։ այդ բառերն է հոլովում այսօր գրեթէ ամեն մի գերմանացի, և նրա ասելութիւնը այս պատերազմի ընթացքում ամենամոլեգին թռիչքներն է գործում մասնաւորապէս Անգլիայի դէմ։ գերմանացու ասելութիւնը այդտեղ արդէն օրգանական է, տարերային։

*Եւ այդ ասելութեան անձնաւորումն է ինքը կայզերը։ Իր «խաղաղասէր» ճառերի մէջ յաճախ է նա ակնարկել, որ «Գերմանիայի ապագան ջրերի վրայ է» և յաճախ է ձեռնոց նետել ովկեանների միահեծան թագուհուն։ Այս վայրկեանիս Vorwärts-ի մի հին ու ուշագրաւ թիւն է ընկած առջևս (1905 թ. մարտ 24), մի ընդարձակ խմբագրականով Die öde Weltherrschatt *) խորագրով։ Բերւած են բազմաթիւ կտորներ Վիլհելմ կայսրի այլ և այլ ժամանակ արտասանած ճառերից։ Ահա սի շարք խիստ բնորոշ ֆրազներ, լուսաբանող մեր թեզիսի.*

«Մենք (գերմանացիք) աշխարհի աղն ենք»—ասում է մի տեղ Վիլհելմը։ Մի այլ տեղ, 1896-ին յայտարարում է. «Մեր գերման կայսրութիւնը դարձել է համաշխարհային մի թագաւորութիւն (Weltreich). հազարաւոր գերմանացիներ ապրում են երկրագնդի բոլոր ծայրերում. գերման ապրանքները, գերման գիտութիւնն և աշխատասիրութիւնը անցնում են ովկեանի այն կողմը. ձեզ բոլորիդ վրայ ընկնում է լուրջ պարականութիւն՝ որ այդ մեծագոյն գերման բաղաքացիութիւնը շաղկապւի մեր բուն հայրենիքին»։

Համաշխարհային տիրապետութեան երազը նշմարւում է այդ բառերի մէջ, 1900-ին նոյն Վիլհելմը մի բաժակաճառի ընթացքում յայտարարում էր. «Գերման կայսրի բազուկը պէտք է հասնէ աշխարհի ամենահեռաւոր ծայրերը»։ Մի այլ առթիւ ասում է.

«Մենք պէտք է նոյնչափ զօրանանք ազգայնում, նոյնչափ զուռանանք սիրտ միացած ու ազդեցիկ, ինչպէս երբեմն Հռոմկական ռամբարարական կայսրութիւնն էր, որպէսզի ազգայնում նոյն իմաստով ասեն՝ «ես գերման քաղաքացի եմ», ինչպէս հնում ասում էին՝ civis romanus sum»։

Ակնհայտ է, նոյնիսկ այդ մի քանի կըցկտուր ֆրազներից, որ ամբարձածաւալ նուաճումների տենչն էր Հոհենցօլլերներին փոթորկող ու խթանող ազդակը, բրիտանական դափնիները յափշտակելն էր նրա հիմնական մտահոգութիւնը։

Եւ ահա տենդային հետաքրքրութեամբ նորից ու նորից կարդում եմ այդ ուշագրաւ քաղուածքները։ Իմ հետաքրքրութիւնը սաստկանում է նրանով, որ այդ քաղուածքների հրատարակողը և գրիչերական այդ սին բանդագուշանքների խարազանողը Vorwärts-ն է, կենտրոնական օրգանը մի կուսակցութեան — սոցիալ-դեմոկրատիայի — որ պատերազմի առաջին օրերին իսկ յարից կուրօրէն Վիլհելմի ու շրջապատող կամարիլլայի յարձակողական քաղաքականութեան, քուէարկեց պատերազմի ամբողջ բիւդջէն, խաչ դրեց իր ամբողջ անցեալի վրայ և—ինչպէս իրաւամբ ասում էր նորերս մի խառլացի սոցիալիստ—գործեց մարդկային պատմութեան մէջ նմանը չտեսնուած հաւաքական դաւաճանութիւն...

Միք. Վարանդեան

*) Աշխարհի սին (դատարկ) տիրապետութիւն։

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Արծափ, 16 ապրիլի

(Հեռագրով)

Դիպուկին շրջանի բազմաթիւ փախստականները տեղափոխուել են Արծափի շրջանը, հայրենիք վերադառնալու նպատակով։ Անհրաժեշտ են պահակներ և անդադար կայաններ դէպի Վան տանող ճանապարհին։ Դժբաղդների դրութիւնն անհիւանդագրելի է։ Ալիւր բնաւ չկայ. սով է տիրում։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն։

Եղբայրական Օգնութեան Նախագահ՝

Մովսէս

Էջմիածին, 15 ապրիլի

Հաստատ աղբիւրից մեզ հաղորդում են, որ Սինոդի անդամութեան համար առաջարկուած են Կաթուղիկոսի դիւանապետ Տիրայր ծ. վարդապետ Տէր-Յովհաննիսեան և Նոր-Նախիջևանի փոխանորդ Գէորգ վարդապետ Զէոբէքչեան։

— Մօտ օրերս գաղթականական գործերով Մուշ ուղևորուելու ճեմարանի ուսուցիչներ պ. պ. Աւետիք Տէր-Գէորգեան, Բահաթուր Բահաթրեան և Իսահակ սարկաւագ Տէր-Ղազարեան։ Նրանք, բացի գաղթականական գործերից, զբաղուելու են նաև եկեղեցական ցրուած անօթները և սրբութիւնները ժողովելով, որոնք պէտք է էջմիածին բերուին։

— Կաթուղիկոսի դիւանի կողմից առաջարկուած է Քաղաքների Միութեանը ճեմարանի շինութեան մէջ գտնուած հիւանդանոցը դատարկել, որպէսզի այժմեանից կարելի լինի վերանորոգութեան ենթարկել շինութիւնը։

— Մօտ օրերս դէպի Կարին է ուղևորուելու Բագրատ եպիսկոպոսը։

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Բաքում, 14 ապրիլի

Տրապիզոնից ստացուած մի նամակում, որ գրուած է ամսոյս 11-ից և ուղղուած է Տրապիզոնցիների տեղիս Հայրենակցական Միութեան, կարդում ենք հետևեալը.

«Հայկական բոլոր տները, անխտիր, թալանուած են, պատուհանները, դռներն ու փեղկերը ջարդուած, աւերուած են։ Թալանին սկզբում մասնակցել են թիւրքերը, իսկ առիթը չեն փախցրել օգտուելու և յոյները... Եղած սոսկումների մասին խօսելը աւելորդ եմ գտնում, որովհետև ոչ խօսքը և ոչ էլ գրիչը կարող է նկարագրել։ Մի կատարեալ դժոխք, ուսկից մարդ միայն փախչել է ուզում։

«Եկած յանձնաժողովի անդամները հանդիստ ասուած բանը չունին։ Ամեն բոպէ նոր-նոր մարդիկ են գալիս, մեծ մասը շրջակայքի գիւղացիներից։ Մօտաւորապէս 200—250 գիւղացիներ արդէն եկած են և շարունակարար գալիս են։ Ցոյս ունինք, որ 600—800 հոգի դուրս կը գան, գուցէ և աւելին։ Շատերը թաղնուած են հեռու անտառներում ու գիւղերում։ Բացի դրանից, նոր գրաւեալի տեղերից շատ մարդ պիտի դուրս գայ։ Գաղթականներից շատ քչերն են ազատուել։ Այստեղ կան մի քանի տասնեակ ազատուածներ, որոնց ցուցակը նամակիս հետ ուղարկում եմ։ Հարիւրաւոր ընտանիքներ ամբողջովին կորստեան են մատնուել... Տարագրուածներից շատ աննշան մասն է միայն ազատուած, որոնց մասին լուրեր կան։ Գաղթականներից ևս գուցէ մի քանի հարիւր մարդ գտնենք, որոնք իբր թէ պահուած են շրջանի գիւղերում և մօտ քաղաքներում։

«...Աստիճանաբար սկսեցինք տեղեկութիւն բաց ենք անել տալիս տներ և եկած մարդկանց դնել գիշերելու ազատատարան տալիս։ Անկողին ասուած բանը համարեա չունինք, ուստի շատ դժուարութիւնների ենք հանդիպում։ Գնացինք հայ-լուսաւորչական և հայ-կաթոլիկ առաջնորդարանները։ Լրիւ գաղափար կազմելու համար պիտի դալ ու ականատես լինել, գրելով չի բացատրւի։ Անդին քանակութեամբ ման կան-կարասիներ ջարդ ու փշուր թափուած են այնտեղ։ Ինչեր ասէք, որ այնտեղ չի գտնուում, սկսած հասարակ իրերից մինչև դաշնամուր։

«Այսօրուանից առաջնորդարանը պարպել ու մաքրել ենք տալիս։ Ուզում ենք կանանց ու երեխաների ժամանակաւոր ազատատարան դարձնել։ Որոշել ենք որը երեխաներին փոխադրել Բաթում։ Մնացած ժողովուրդին, զբաղուորապէս քաղաքացիներին, այստեղ պահել, իսկ գիւղացիներին գիւղ ուղարկել և նրանց միջոց տալ վերականգնելու իրենց տնտեսութիւնը։ Կարծում ենք, որ սա ամենալաւ միջոցն է։

«Այստեղ ուտելիքի շատ նեղութիւն կայ, ալիւր, գետնախնձոր բոլորովին չկայ, իսկ շաքար հօ չկայ ու չկայ։ Առաջին նաւով անպայման ուղարկեցէք զանազան ուտելիքներ։

«Այստեղ շատ կարիք է զգացուում քահանայի, ուստիներն գիտնալ անհրաժեշտ է նրան։ Ազգային բոլոր կայքերը մնացել են երեսի վրայ, այս մասին լուրջ պիտի մտածել։ Ամբիոնապէս գրեցէք հոգևոր կառավարութեանը, թող անյապաղ քահանայ ուղարկի, ցանկալի է, որ վարդապետ լինի։ Կարիքը շատ մեծ է, ամեն բանով։

«...Կամաց կամաց գալիս են մեծ ու փոքր երեխաներ, աղջիկներ։ Բաղաքացի երեխաներ շատ կան։

Վերոյիշեալ նամակի հետ ուղարկուած է Տրապիզոնի մէջ ողջ մնացած քաղաքացիների հետեւեալ ցանկը.

Արաքսի Փաչաճեան, Յովիկ Արապեան, Էլպիս Բէշիշեան, Անարոն, Սիրանոյշ, Մանուշակ, Նարգուէի, Վիկտորիա և Յովսէփ Նապիսեաններ, Իմաստուէի Սարամաթեան, Մանոնիկ, Արմենուհի և Մարի Տէմիրճեաններ, Նարգուէի Սանոսեան, Յակոբ, Մաքրուէի և Մարինա Զաուշեաններ, Յարութիւն Անանիկեան, Յոլինէ, Արփիկ և Գասպար Տէր-Համբարձումեաններ, Լօլա Փաչաճեան, Վերոնիքա Էլմասեան, Երմոնիկ Սիւտէզեան, Հայի Մարիամ Աբութեան, Գարգև Մարիմեան, Բասոլին, Օնիկ և Գասպար Գասպարեաններ, Արմենուհի Բիւրճեան, Արմենուհի Ֆընդիքեան, Տիգրան Յովակեան, Մեքայէլ և Հիլդա Ալանեաններ. Օնիկ Սալճեան, Վահան և Ֆեմի Էլվիզոնեաններ, Ֆիլոմեն, Գերտ և Վահագ Ղազիկեան, Աստղիկ Մակուլեան, Վարդանուշ Թաթոսեան, Մարան, Յարութեան, Օնիկ և Մարի Մուռանեաններ, Սիմա Կիւրեղեան, Հերանուշ Արապեան, Մաքրուհի Ալթունեան, Անահիտ և Արա Մաղուտեան, Սիրանուշ Գասպարեան, Վառեակ Վարդանեան, Արեւալոյս և Ազատուհի Հովիւեան, Սիրանոյշ Սանկսարեան, Արմենուհի և Արմենակ Խրիմեաններ, Գրիգոր Կիւլեղեան, Բարդուհի Կուկուեան, Բերուզիկ, Զուարթ Մալխասեան, Սիմէոն Սառաճեան, Զապէլ (Նալբանդ Մեսրոպի աղջիկ), Ելպիս և Ալէքսան Ղազարեաններ, Թագուհի Զօրեան, Վարդիթեր Բալբաքճեան, Յակոբ, Ստեփան, Սիրանուշ և Խաչիկ Ղազարեաններ, Ազգանուշ և Թագուհի Խանջեաններ, Աղասի և Արշաւիր Գեարոսեաններ, Զարթ (քարակոմ Մաթէոսի աղջիկը), Հայկուհի Մակարեան, Զարուհի Ճերմակեան, Սրբուհի Բաբերցեան, Իմաստուհի

digitised by A.R.A.R.@

Գիզեան (Աւօի քրոջ աղջիկը), Ազնիւ Մաւեան, Սուրէն և Նուբար Օհանեանները, Տիրուհի, Թերեզիկ և Մարիքա Նուրիխանեաններ, Սաթենիկ Արապեան, Գուրգէն Կորկոտեան, Քիրայր Գաբաժաճեան, Տիգրան և Գայծառ Ցովակեան, Ազասէր, Ցակոբ, Գեորգ և Ցարութիւն Մատիկեան, Արշաւիր Թումանեան, Ցակոբ Էպլէղիճեան, Աղաջան և Սլուանդ Ֆնդքեան, Ղազար Մակեան, Գէորգ Կոթիկեան, Առաքել Կոթիկեան (Արժան), Ցովհաննէս և Սարգիս Ֆնդքեան, ընդամենը 104 հոգի։ Այս ցանկից դուրս կան ուրիշներ, որոնց ցանկն էլ առանձին տոթիւ կուղարկուի։ Կան նոյնպէս ողջեր մօտակայ շրջաններում, որոնք տակաւին չեն գրաւուած. հետզհետէ կը զատրաստուեն ուրիշ տեղեկութիւններ էլ։

Վաղը, նաւով այստեղ, Բաթումում, ապաստում են Տրապիզոնից 30 որբեր և ուրիշ անձեր։

Amiko

ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ ՄԱՐԴԸ

Էրզրումի հայ բնակչութեան ողբալի դրամայի ականատեսներից մէկն է այժմ ժամանել Թիֆլիս։ Դա Էրզրումի ամերիկացի միսիոնար միսթր Սաբզպլան է։ Նա իր հետ բերել է Եփրատի ակունքներում ապրող ժողովրդի ողբերգական վախճանի ականատես բնակիչներից մի քանիսին, իր հովանաւորութեան տակ եղած որբանոցի երկու աղջիկներ, դրանց հետ մէկտեղ Ալաշկերտի շրջանից փոքրիկ, հազիւ 4—5 տարեկան թմբլիկ, զարթաղէմ մի աղջիկ։ Վերջինս խօսում է թիւրքերէն։ Ամբողջ ճան ամիսներ մնալով մահմեդականների ճանկում, արդէն մոռացել է մայրենի թոթովանքը, միայն թարմ պահելով իր մանկական հոգու խորքում հօր ու մօր անունները։

Առանց յուզմունքի լսել չի կարելի որբիկների պատմութիւնը, իրենց միակ ապատարարի, միսթր Սաբզպլանի մասին։

Երբ գերման ու թիւրք բարբարները զանազան պատրուակների տակ, իրենց գազանային կիրքերը բաւարարելուց յետոյ, ժողովրդին դուրս են քշում քաղաքից, ի հարիէ իրենց հարէմները լիքը պահելով մատաղահաս կոյսերով և գեղեցկադէմ հարսներով, Ներանց գայլի հայեացքից չի վրիպում և միսթր Սաբզպլանի տունը, ուր ապաստանել էին 20-ի չափ որբ աղջիկներ։ Հերոս պատուելին նկատում է այդ և դիմում ամեն հնարաւոր միջոցների, փրկելու համար ապաստանուածների կեանքն ու պատիւը։

Քանիցս անգամ գերմանական սպաների առաջնորդութեամբ շրջող ժանդարմները պահանջում են որբերին և նոյնիսկ սպառնում պատուելուն ձերբակալել, սակայն վեհանոգի մարդը միշտ էլ հերոսաբար պաշտպանում է և հրաժարւում կատարել նրանց ցինիկ ցանկութիւնը, քանի դեռ ինքն կենդանի է։

Մի անգամ սպառնում են հրդեհել ամբողջ տունը. նոյնիսկ պատրաստութիւններ են տեսնւել այդ նպատակով։ Բայց միսթր Սաբզպլան գոռում է նրանց երեսին. «Որքանոցի դռները կը բացուն այն ժամանակ, երբ բոցերը կը կլանեն ամբողջ տունը և նրա բնակիչներին»։

Որբերի այդ ճգնաժամերում միսթր Սաբզպլանն չի մոռանում հոգալ նրանց առողջապահական պայմանների մասին իսկ։ Որբանոցի կից աղբիւրները հակառողջապահիկ գտնելով, օրական մի քանի անգամ դոյլերը ձեռին բարձրանում է նա մէկ վերստ հեռաւորութեան վրայ «Ճերժակ Աղբիւր» կոչուած աղբիւրը և թարմ ու մաքուր ջուր ժառակարարում որբերին։ Նման ծառայութիւններ արել է նա մնունդի վերաբերմամբ ամենավատնգաւոր և սպառնալից պարագաներում։

Երբ բնաւոր տիֆն ու զանազան հիւանդութիւնները ապատ մուտք են գտել թիւրք զորքերի և ժողովրդի մէջ, միսթր Սաբզպլանի որբանոցում հիւանդութեան դէպք անգամ չի պատահել։ Ջնորհիւ պարտնի և իր կնոջ աշխուրջ հսկողութեան և ծայր աստիճան մաքրութեան։

Ռուսական բանակի ներս խուժումը միայն վերջնականապէս փրկել է հէգ որբերին, որովհետև վերջին օրերում թիւրքերի կողմից արդէն վճռուած է եղել, ինչ գնով էլ լինի, դուրս քշել աղջիկներին միսիոնարի տնից և կոդոպել այնտեղ պահուած տեղահանուած շատ հայերի կոհակասիքը և զարդեղէնը։

Պատմում է պատուելին, թէ ինչ վայրագութեամբ քրիստոնեայ գերման զինուորականները դուրս քշեցին մի քանի յոյն ընտանիքներից այնտեղ մի կերպ թաքնուած հայ յայտնի ընտանիքների դեռահաս աղջիկներին, և անտարբեր նրանց ապիրատ պաղատանքին, բարձրացրած վայնասունին, զզուելի ակնարկներից յետոյ հեռացրին քաղաքից։

Պատուելին սրտի մրմունջով է յիշում այն յուսակտուր խեղճերին, որոնք տեղահանութեան օրերին դիմել են իրեն, սակայն հակառակ իր ցանկութեան ժամանակագրիկանութիւնը արգելք է հանդիսացել դիմողներին ու կոպտօրէն հայհոյանքների տարափի տակ խառնել է նրանց նահատակների կարաւանին։

Միսթր Սաբզպլան կազմել է ընդարձակ մի ցուցակ, ուր մէկ-մէկ նշանակուած են այն հայերի անունները, որոնք յանձնել են իրեն թէ կանարսիքը և թէ զարդեղէնները. այդ զոյքերն այժմ գտնուում են Էրզրումում, իր տան մէջ, կնքուած իր և ռուս կառավարութեան կողմից, անշուշտ ապագային յանձնելու իրենց տէրերին և կամ նրանց ազգականներին։

Միսթր Սաբզպլան շուտով մեկնում է Ամերիկա 3—4 ամսւայ արձակուրդով և իր հետ տանում է Էրզրումի և շրջակայքում կատարուած արիւնոտ դէպքերի բոլոր մանրամասնութիւնները։ Անշուշտ միսթր Սաբզպլան իբրև ականատես և իբրև ցաւակից մեր դժբախտ ժողովրդի, որի հետ կողքկողքի ապրել է երկար տարիներ շարունակ, նրա ցաւերի, նրա քաշած տառապանքների ամբողջ հայելին մի անգամ ևս կը ցուցադրէ իր հայրենակիցների առաջ, որպէս վկաների ապագայ դատաւորութեան համար։

Բարի երթ և բարի վերադարձ ձեզ, ազնիւ մարդ։

Արս. Բաստրմաճեան

ՄԻ ԷՋ ԳԵՐՄԱՆՕ-ԹԻՒՐՔ ԶԻՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Եճուբը Վիլհելմի մօտ

1914 թ. յունուարի սկզբին, երբ Էնուէրն արդէն զինուորական մինիստր էր, Գոլսի գերմանական դեսպան Վանգենհայմը նրան յայտնեց, որ կայսրը ցանկանում է գաղտնի տեսակցութիւն ունենալ նրա հետ Բերլինում։ Եւ Էնուէրն իսկոյն մեկնեց։

Բերլինի նախկին ֆրանսիական դեսպան ժիլ Կամբոնի մի հեռագիրը, որ պաշտօնապէս հրատարակել է ֆրանսիական կառավարութեան կողմից, ցոյց է տալիս, որ այդ ժամանակ Վիլհելմն արդէն վճռել էր պատերազմը՝ համաձայնած լինելով աւստրիական գահաժառանգի հետ. պէտք էր սպասել միայն յարմար բոպէի, մի պատրուակի։ Բայց ոչ ոք չէր կասկածում, որ հենց նոյն գահաժառանգի Սարաեւոյում սպանութիւնն էր լինելու պատրուակը համաշխարհային հրդեհի։

Վիլհելմն իբրէ շրջահայեաց ռազմիկ բնականաբար նկատի ունէր իր դատին ծառայեցնել թիւրքիան, և փառասէր ու բախտախնդիր Էնուէրը ներկայանում էր նրան իբրէ ամենայարմար մարդն իր այդ ծրագրի իրագործման համար։

Բերլին հասնելուն Էնուէրն անմիջապէս ունկնդրութեան ընդունուեց կայսեր կողմից։

Միայն 1914 թ. դեկտեմբերին, Էնուէրի համաձայնութեամբ, «Թանինը» ուեց այս հակառագրական տեսակցութեան մանրամասները.

«Կայսրը ծանրախոհ էր. առանց յառաջաբանի նա իսկոյն անցաւ բուն նիւթին։

— Ես ձեզ այնպիսի բաներ պիտի ասեմ, որոնց մասին մի քանի ամիսներ ոչ ոք ոչինչ չպիտի իմանայ։ Չնայած, որ դեռ երիտասարդ էք, բայց ինձ յայտնի է ձեր լրջութիւնը։

Էնուէրն ապահովեց Վիլհելմին, որ եթէ պէտք է, լուռ կը մնայ մինչև յաւիտեան։

— Հիմա ունիմ կարծելու, շարունակեց կայսրը, որ խաղաղութիւնը վտանգուելու է. և եթէ պատերազմը պայթի, նա կարող է հակայական ծաւալ ստանալ։ Աւելորդ եմ գտնում մանրամասների մէջ մտնել։ Եթէ իմ ծրագիրներն իրականանան, պատերազմից յետոյ՝ մէկն արևմտքում, միւսն արևելքում կը ստեղծուն երկու մեծ կայսրութիւններ, որոնք կիշխեն աշխարհի կէսին։ Արևելեան այդ նոր կայսրութիւնը կը դառնայ թիւրքիան, որ այդ դէպքում հզաւորիկ կը մեծանայ տերրիտորիայով ու իր ազդեցութեամբ։ Այս վիթխարի ծրագրի իրականացման համար յոյս ունիմ թիւրքիայի աջակցութեան վրայ, և դրա համար է, որ սիրաս բաց եմ անում ձեր առաջ։ Ձեր հայրենիքի շահերի և մեծութեան հարցն է դրուած սեղանի վրայ, բայց ես չեմ կարող այդ մասին բանակցել ձեր կառավարութեան հետ։ Դուք ունիք պահանջուած հեղինակութիւնը այդ ճանապարհով առաջնորդելու թիւրքիան առանց ոչինչ իմացնելու ձեր պաշտօնակիցներին մեր համաձայնութեան մասին, գէթ մի առ ժամանակ։ Դուք ձեր կառավարութեան մէջ վայելում էք բաւականաչափ վստահութիւն՝ այդ առթիւ հարկաւոր նախապատրաստութիւններն անելու համար, առանց լրիւ բացատրութիւններ տալու նպատակի մասին։ Դուք ձեզ զգում էք այնքան հզօր, որ մի քանի ամիս շարունակ ձեր կամքը թելադրէք։ Տարին չլրացած, կարճատև ու վճռական պատերազմից յետոյ ես կը թելադրեմ հաշտութեան պայմանները։ Աւելի պարզ չեմ խօսում, բայց դուք արդէն բաւականաչափ հասկացաք իմ ծրագիրը»...

Պէտք է երևակայել, թէ ինչ մեծ ազդեցութիւն գործեցին Վիլհելմի խօսքերն Էնուէրի վրայ։ Նա դեռ Բերլինում զինուորական կցորդ եղած ժամանակից հասկացել էր Գերմանիայի զինուորական հզօրութիւնը։ Նրան ամենուրեք ազատ էին թողել շրջելու և անձամբ տեսնելու հսկայական նաւատորմիղը, թնդանօթների, ռազմանիւթի անսպառ առատութիւնը, փոխադրութեան ու պահեստների հրաշալի կազմակերպութիւնը։ Եւ մի օր Գլուում իր մի բարեկամին այսպէս էր արտայայտում իր հիացումը.

— Թէկուզ ամբողջ աշխարհը յարձակի Գերմանիայի վրայ, Գերմանիան կը յաղթէ ամբողջ աշխարհին։ Նա անպարտելի է։ Եւ երբ Վիլհելմը պարզեց իր ծրագիրը, Նրա երևակայութեան ներկայացաւ արդէն մոտիկ ապագայի նոր, լայնածաւալ օսմանեան կայսրութիւնը։

Թիւրք թերթերն աւելացնում են որ «նա շնորհակալութիւն յայտնեց նորին մեծութեանը, որ բարեհաճել է իր վստահութեանն ու յարգանքին արժանացնել նրան։ Եւ նա հանդիսաւորապէս խոստացաւ, իր անձի երաշխաւորութեամբ, որ Թիւրքիան Գերմանիայի կողմը կանցնի հենց որ պահանջւի»։

Բայց և միաժամանակ շեշտեց, որ Բալկանեան պատերազմը շատ թերութիւններ յայտնաբերեց թիւրքական բանակում, այնպէս որ պէտք է վերակազմել։

— Ինչ որ հարկաւոր է, լիովին կը ստանաք, ասաց կայսրը, զեն. Մոլտկէն, շտաբի կառավարիչը, կը տայ ձեզ ամեն ինչ՝ առանց բացատրութեան։

Համաձայնութիւնն արդէն կայացած էր։ Վիլհելմ II իր կայսերական ձեռքն երկարեց Նազիմ փաշայի մարդասպանին, և զինակցութիւնը կնքուեց։

(„Le Figaro")

ՑՈՒՑԱԿ

Սպանուած եւ վիրաւոր հայ կամաւորների

Անդրանիկի Հայ Կամաւորական I գունդը 1915 թ. նոյեմբերի 14-ից մինչև 1916 թ. մարտի 16-ը կռիւների մէջ ունեցել է հետևեալ սպանուածներն ու վիրաւորները.

Սպանուածներ. Սոփար Էնգէյեան, Աւետիս Ցարութիւնեան, Մուշեղ Խաչիկեան, Աբգար Գարոյեան, Ցովհաննէս Մարգարեան, Նահապետ Մանուկեան, Նշան Զուլֆեան, Գէորգ Ստեփանեան, Միքայէլ Գողոսեան, Աբգար Ցակոբեան, Ցովսէփ Մարգարեան, Սարգիս Թաշճեան, Ներսէս Ղլտճեան, Սեղբակ Առաքելեան, Հայբարձում Սրապեան, Խոսրով Բաղիգեան, Գրիգոր Շարոյեան, Մարգար Տէր-Բարսեղեան, Կարապետ Մարգարեան, Մարկոս Մարկոսեան, Ցակոբ Աւետիսեան, Լևոն Շէրբիթեան, Եզոր Գարբէլեան, Մելիք Ցովակիմեան, Ստեփան Թումանեան (ինտենդանտ), Ցովհաննէս Ոսկերչեան, Արամ Ոսկերչեան, Ցակոբ Վարդեան, Գարեգին Բշիգեան, ընդամենը 29 հոգի։

Վիրաւորուածներ.—Արշակ Գոլէյեան, Գէորգ Գողոսեան, Մուշեղ Սարգսեան, Մելիք Ցովհաննիսեան, Տիգրան Մկրտչեան, Մարտիրոս Նազարեան, Արտաշէս Շահբազեան, Եղիազար Գալստեան, Աւետիս Բաղդասարեան, Ցարութիւն Ղարիբեան, Հմայեակ Հասանեան, Համազասպ Ցարութիւնեան, Եզոր Սահակեան, Վախթանգ Դաւթեան, Գարժան Բէյնանեան, Առաքել Առաքելեան, Մուշեղ Տոնիկեան, Վահան Ոսկերչեան, Ցովսէփ Ցովհաննիսեան, Ռուբէն Բաղրատեան, Գողոս Գարբինեան, Ցով Բարսեղեան, Հայբարձում Պետրոսեան, Եբլանդ Անուշեան, Արշակ Նշանեան, Մուշեղ Կարապետեան, Մկրտիչ Դանիէլեան, Կարապետ Ցովհաննիսեան, Բերոբ Սերոբեան, Արտաշէս Միրզոյեան, Մկրտ Օխլաթեան, Արիստակէս Զաքարեան, Գասպար Մխիթարեան, Մովսէս Սարոյեան, Նարգո Երանոսեան, Սահակ Ենիկեան, Վարդան Աղոյեան, Արտաշէս Աղանդեան (ինտենդանտ), Տիգրան Գասպարեան, Արմենակ Խուրշուդեան, Սահակ Ասլանեան, Ցակոբ Գալստեան, Գառնիկ Վերեղեան, Գէորգ Ղազարեան, Կարապետ Օհանեան, Միսակ Տացեան, Անդրանիկ Սիսակեան, Սահակ Ցովհաննիսեան, Սեղբակ Ցարութիւնեան, Կարապետ Գենկլիշեան, Նշան Թղթիկեան, Բարդող Գարբիէլեան, Գեորգ Ալիխանեան, Սիմէոն Կշիգեան, Մատթէոս Թովմասեան, Մերիշան Բալեան, Վարդգէս Աբշարեան, Անտոն Սահակեան, Միհրան Տէրտէրեան, Ցովսէփ Գաբրիէլեան, Գարեգին Ջրոյեան, Գէորգ Թաշճեան, Միսաք Մելիքեան, Հայրապետ Բահամեան, Մկրտիչ Թէյզրիրեան։ Ընդամենը 66 հոգի։

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ԳԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԴԱՏՈՒԹԻՒՆ

16 ապրիլի

Արեւմտեան ճակատ.— Թշնամու արտիլերիան կրակ բացեց Շլոկի և Բերզեմունդէի դէմ։ Գինովկա գիւղի շրջանում, Դիւնսկից դէպի արևմուտք, գերմանացիները թընդանօթային նախապատրաստումից յետոյ յարձակման դիմեցին, բայց մեր կրակով յետ վռնդուեցին դէպի իրենց խրամատները։ Նարոչ լճի հարաւ-արևմտեան կողմը գերմանական արտիլերիան երեկ լուսադէմին փոթորկային կրակ բացեց, որից յետոյ թշնամու հետեւակը յարձակման դիմեց թանձր զօրասիւներով։ Գերմանացիներին աջողուեց տիրել իրենց կորցրած նախկին խրամատներին։ Զանալոչա—Ստախովցի գիւղերի ճակատում տաք կռիւ է տեղի ունենում։ Սմորգոն աւանի շրջանում ևս գերմանացիները թընդանօթային փոթորկային կրակ են բացել։

Սեւ-ծով.— Մեր սուզանաւը, ապարդիւն կերպով ռմբակոծելով թշնամու օդանաւերից և մարտկոցներից, Բոսֆորի մօտ խորտակեց մի շոգենաւ և առագաստանաւ։

Կովկասեան ճակատ.— Երզընկայի ուղղութեամբ մեր զօրամասերը, յետ մղելով թիւրքերի յարձակումները, յարձակման դիմեցին և յետ շպրտեցին թշնամուն դէպի արևմուտք։

17 ապրիլի

Արեւմտեան ճակատ.— Ռիգայի ուղղութեամբ թշնամու արտիլերիան կրակ էր կենտրոնացրել Շլոկի դէմ և Դելին կղզու հարաւային կողմը։ Զելբուրգ կայարանի շրջանը, Եակոբշտադի հիւսիս-արևմտեան կողմը, նոյնպէս ենթարկուեց թշնամու ռմբակոծութեան։ Դիւնակի գիրքերի ճակատի վրայ շատ տեղերում թընդանօթամարտ է տեղի ունենում։ Նարոչ լճի արևմտեան շրջանում կռիւը հանդարտուեց։ Թշնամին փորձում էր առաջ անցնել իր երկաթալարերի ցանցերից Սիբն էի և Կրևօի շրջանից, բայց յետ մղուեց մեր կրակով։ Մուրաւիցայից դէպի հիւսիս, Իկւայի վրայ, աւստրիացիները կատաղի ռմբակոծութիւնից յետոյ, երեկ լուսադէմից առաջ յարձակման դիմեցին խոշոր ոյժերով Փոքր և Մեծ Բոյարկա գիւղերի արևմտեան կողմը մեր առաջ քաշած խրամատների դէմ, որոնք բռնուած էին մի վաշտով, և ստիպեցին վերջինս յետ քաշուել։ Այն ժամանակ մեր զօրամասերը իրենց հերթին ուժեղ կրակ բացին, չնայելով թշնամու փոթորկային կրակին, և մեր կորցրած խրամատները յետ խլուեցին նրանց պաշտպանող բոլոր կենդանի մնացած մաղար զօրքերով։ Ընդամենը գէնքը վայր դրին մաղարների երկու բատալիոն, որոնց կազմի մէջ մտնում էին 2 սպայ, 2 բժիշկ և 600-ից աւելի զինուորներ։ Խրամատների մէջ թափուած են սպանուած և վիրաւոր մաղարների կոյտեր։ Մեր կորուստներն են 4 սպայ և մօտ 100 զինուոր։ Խլուած են նմանապէս մեծ քանակութեամբ հրացաններ, զինամթերք, փամփուշտներ, ռումբեր և արգելարաններ։

Կովկասեան ճակատ.— Դիարբեքիրի ուղղութեամբ մենք յետ մղեցին թիւրքական յառաջապահ զօրամասերի յարձակումը։

ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆԴՈՆ, 16 ապր.— Քիրանի արտիլերիան կրակ բացեց Շլոկի և Բերզեմունդէի դէմ։ Գինովկա գիւղի շրջանում, Դիւնսկից դէպի արևմուտք, գերմանացիները թընդանօթային նախապատրաստումից յետոյ յարձակման դիմեցին, բայց մեր կրակով յետ վռնդուեցին դէպի իրենց խրամատները։ Նարոչ լճի հարաւ-արևմտեան կողմը գերմանական արտիլերիան երեկ լուսադէմին փոթորկային կրակ բացեց, որից յետոյ թշնամու հետեւակը յարձակման դիմեց թանձր զօրասիւներով։ Գերմանացիներին աջողուեց տիրել իրենց կորցրած նախկին խրամատներին։ Զանալոչա—Ստախովցի գիւղերի ճակատում տաք կռիւ է տեղի ունենում։ Սմորգոն աւանի շրջանում ևս գերմանացիները թընդանօթային փոթորկային կրակ են բացել։

Սեւ-ծով.— Մեր սուզանաւը, ապարդիւն կերպով ռմբակոծելով թշնամու օդանաւերից և մարտկոցներից, Բոսֆորի մօտ խորտակեց մի շոգենաւ և առագաստանաւ։

Կովկասեան ճակատ.— Երզընկայի ուղղութեամբ մեր զօրամասերը, յետ մղելով թիւրքերի յարձակումները, յարձակման դիմեցին և յետ շպրտեցին թշնամուն դէպի արևմուտք։

17 ապրիլի

Արեւմտեան ճակատ.— Ռիգայի ուղղութեամբ թշնամու արտիլերիան կրակ էր կենտրոնացրել Շլոկի դէմ և Դելին կղզու հարաւային կողմը։ Զելբուրգ կայարանի շրջանը, Եակոբշտադի հիւսիս-արևմտեան կողմը, նոյնպէս ենթարկուեց թշնամու ռմբակոծութեան։ Դիւնակի գիրքերի ճակատի վրայ շատ տեղերում թընդանօթամարտ է տեղի ունենում։ Նարոչ լճի արևմտեան շրջանում կռիւը հանդարտուեց։ Թշնամին փորձում էր առաջ անցնել իր երկաթալարերի ցանցերից Սիբն էի և Կրևօի շրջանից, բայց յետ մղուեց մեր կրակով։ Մուրաւիցայից դէպի հիւսիս, Իկւայի վրայ, աւստրիացիները կատաղի ռմբակոծութիւնից յետոյ, երեկ լուսադէմից առաջ յարձակման դիմեցին խոշոր ոյժերով Փոքր և Մեծ Բոյարկա գիւղերի արևմտեան կողմը մեր առաջ քաշած խրամատների դէմ, որոնք բռնուած էին մի վաշտով, և ստիպեցին վերջինս յետ քաշուել։ Այն ժամանակ մեր զօրամասերը իրենց հերթին ուժեղ կրակ բացին, չնայելով թշնամու փոթորկային կրակին, և մեր կորցրած խրամատները յետ խլուեցին նրանց պաշտպանող բոլոր կենդանի մնացած մաղար զօրքերով։ Ընդամենը զէնքը վայր դրին մաղարների երկու բատալիոն, որոնց կազմի մէջ մտնում էին 2 սպայ, 2 բժիշկ և 600-ից աւելի զինուորներ։ Խրամատների մէջ թափուած են սպանուած և վիրաւոր մաղարների կոյտեր։ Մեր կորուստներն են 4 սպայ և մօտ 100 զինուոր։ Խլուած են նմանապէս մեծ քանակութեամբ հրացաններ, զինամթերք, փամփուշտներ, ռումբեր և արգելարաններ։

Կովկասեան ճակատ.— Դիարբեքիրի ուղղութեամբ մենք յետ մղեցին թիւրքական յառաջապահ զօրամասերի յարձակումը։

ՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆԴՈՆ, 16 ապր.— Քիրանի զորքերը հաղորդում է. 143 օր տեղի ունեցած մարտերից յետոյ, որ աչքի էր ընկնում այնպիսի քաջութեամբ ու տոկունութեամբ, որոնք առիւծ յիշատակելի կը մնան, գեներալ Տաուսենը սարսափած էր, պաշարները սպառուած լինելու պատճառով, յանձնել կուսը։ Ցանձնումից առաջ նա ոչնչացրել էր բոլոր թընդանօթներն ու պաշարները։ Նրա հրամանատարութեան տակ գտնուած ոյժերը բաղկացած էին 2970 հոգի անզլիական ամեն տեսակ զինակիր զօրքերից և զօրքերի շարքերի մէջ չեղող 6000 հոգի հնդկական զինուորներից։

ԱԹԷՆՔ, 16 ապրիլի.— Դաշնակիցների օդանաւերը ռմբակոծեցին Սեղիքէօյը, Զմիւռնիայի մօտ, և խոշոր աւերներ պատճառեցին։ Դաշնակիցների նաւերը ռմբակոծում էին Զմիւռնիայի ամրութիւնները և ամեն օր ռմբակոծում են ծովեզերքը, անհանգստացնելով թիւրք զօրքերին։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՐԵՄ

ՊԱՐԻԶ, 17 ապրիլի.— Հաւասի գործակալութիւնը հաղորդում է. Վերդենի տակ սկսում է կենդանութիւնը։ Թշնամին փորձում է յարձակուել «304» բարձունքի վրայ Տիեմոնտ ագարակից դէպի արևմուտք և Դուսմոն—Վօ ճակատի վրայ, սակայն այդ գործողութիւնները չունեցին նախկին թափն ու յամառութիւնը։ Աչքի է զարնում ահագին տարբերութիւնը՝ գերմանացիների արդի ցանուցիրու զրոհների, որոնք սկզբից և եթ կասեցուում են մեր կողմից, և փետրուարի 8 ից մինչև մարտի 27-ը զօրքերի խոշոր մասսաների ուժեղ յարձակումների միջև։ 69 օրուայ յամառ ու ապարդիւն ճիգերից յետոյ գերմանացիները այլևս չեն կարող զրոհները կրկնել նախկին ոյժով։ Գերմանացիների յարձակումն ոչ միայն չհասաւ իր գլխաւոր նպատակին, որ էր Վերդենի առումը, այլ և մեծապէս տկարացրեց թշնամու բանակի յարձակողական ընդունակութիւնը։

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ՍՈՖԻԱ, 15 ապր.— Ճակատի վրայ երկու կողմերը փոխադարձ թընդանօթաձգութիւն ունեցան։

ԱԹԷՆՔ. 16 ապրիլի.— Սոֆիայից հաղորդում են, որ Ֆիլիպպոպոլում երեան հանուած շարժումը մասնակցում էին բազմաթիւ զինուորականներ։ Սոֆիայի և Ֆիլիպպոպոլի շատ տներում ռումբեր են գտնուած։

ԱՆԿԱՒԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԼԱՆԴԻՈՒՄ

ԼՈՆԴՈՆ, 15 ապր.— Երեկոյեան թերթերը հաղորդում են, որ Վաշինգտոնում գերմանական դեսպանատան կազմին պատկանող Իգելի մօտ բռնուած փաստաթղթերը պարունակում են գերմանացիների կողմից Դուբլինում պատրաստուած դաւադրութեան մանրամասները։

Իրլանդիական պոստ առաւօտեան Լոնդոն հասաւ բոլորովին ապահով կերպով։ Թերթերի ստացած հեռագիրները հաղորդում են, որ Լոնդոնդերիում և Դրիգգեդում կատաղի անորութիւն է տիրում։

ԼՈՆԴՈՆ, 16 ապր.—Վերջին ոչ պաշտօնական հաղորդագրութիւնների համաձայն, հինգշաբթի օրը Դուբլինի Լիբերտի-հոլլը քանդել է «Լիֆֆոյ» թընդանօթակիր նաւակի կողմից։ Ակումբի հիւրանոցի կտուրների վրայ հաստատուած գնդացիրներով ու ռումբերով, զօրքերը դէն շպրտեցին ապստամբներին Սաուենս-Գրինի հրապարակում ամրացած ապստամբներին։ Ապստամբները դեռ իրենց ձեռքումն են պահում Ջեկոբսի բիսկուիթի գործարանը, որը ռմբակոծուում է զօրքերի կողմից երկու թնդանօթով։ Ասպէս և պատատուտը, դատական որոշումների շուռմերի չէնքը և երկաթուղային կայարանն։ Ապստամբութեան տանքները, որ երկուշաբթի միացան ապստամբութեան, կողոպտեցին քաղաքի գլխաւոր վաճառանոցները։

ԼՈՆԴՈՆ, 16 ապրիլի.— Ֆրենչի հրամանատարութեան մէջ աւելում է. Դուբլինի ապստամբութիւնը ճնշելու համար զինուորական գործողութիւններ զարգանում են նպատակաւոր կերպով։ Ապստամբները կենտրոնացած են մի քանի կէտերում, գլխաւորաբար Սաուիլի փողոցի շրջանում, ուր գտնուում է ապստամբների գլխաւոր շտաբը։ Քաղաքային պոստն ու այդ ամբարը քաղաքամասն աւելի սեղմ կերպով շրջապատած զօրքով, քան առաջ։ Ապստամբներն այստեղ փակուած են իրենց բարիկադների հետ։ Ապստամբների հրացանաձգութիւնը անընդհատ ուղղուում է զինուորների վրայ շարունակուում քաղաքի զանազան մասերում, առանձնապէս դատական որոշումների շինութիւնից հիւսիս-արևմուտք գտնուող մասում, որ դեռ իրենց ձեռքին պահում ապստամբները։ Ապստամբների հէնացումը ժամանակի հարց է։ Խոշոր ջնջաններ են պատճառել ապրիլի 14-ին ծագած հրդեհները։ Նորբոպէիս դեռ շարունակում է Սաքվիլ փ.-ի հրդեհը։ Մնացած Իրլանդիայի ապրական գլխաւոր կենտրոններն են Հալիֆն ու Էնիսկորթին։ Հաղորդուում են, որ անկարգութիւններ են եղել նաև Կիլլարնէյում, Կլոնմէլլում, Հերէյում, Կեանքի բնակիչներ բացը չէ խանգարել։ Իրլանդիայում մնացած մասերում անկարգութիւններ ամենուրեք ըստ երևոյթին տեղական բնոյթ ունին։

ԼՈՆԴՈՆ, 16 ապրիլի.—Դուբլինից հեռագրում են, որ դեռ Զատկի երկշաբթին անդորրութիւն էր տիրում։ Ապստամբները ձիարշաւներ էին տեղունենալու։ Ցանկարծ սինեւոր հրացաններով զինուած երիտասարդներ մի բազմութիւն, սիմֆենիաների հնչմամբ հասած, խուժեց պոստ։ Դուրս հանեց պաշտօնեաներին, բարիկադներ շինեց պատուհաններում։ Դռներում ու բարձրացրեց կանաչ դրօշ։ Ուրիշ խմբեր դրաւեցին Սենտ-Ստեփանստրիտի պարտէզը, Զեկոբսի գործարանը, դատական որոշումների շինութիւնը և մի շարք ուրիշ անձ։ Սակիլստրիտի երկայնքին։ Երեկոյեան ապստամբների գրոհը Դուբլինի զորեկի դէմ յետ վռնուեց գարնիզոնի կողմից։ Հետևեալ օրը զօրքերը եկան և մաքրեցին Սուիֆենզրիները։ Երեքշաբթի օրը մի գեռային թընդանօթակիր նաւ բացեց Լիբերտիհոլլում ապրուած ապստամբների գլխաւոր շտաբի վրայ։ Չորեքշաբթի օրը գրաւեց զօրքերի կողմից։ Զօրքերը շրջապատեցին Ֆնիքս կէտերը։ Ապստամբներն ազատութիւն չունին։ Ապստամբները գտնուում էին Թոմաս Կոնոլլի ղեկավարութեան տակ, որ առաջ ազատատոր Լարսկինի աջ ձեռքն էր «Թայմս» ենթադրում է, որ իրլանդական ապստամբութիւնը մտնում է գերմանացիների պատերազմական ծրագրի մէջ։

ԼՈՆԴՈՆ, 16 ապր.— Մակսուէլ Դուբլին գալով աւելի վճռական միջոցներ են ձեռք առնուած. զօրքերը շրջապատած են նաև քաղաքի ծայրամասերը։

ԼՈՆԴՈՆ, 17 ապր.— Իրլանդական ազգայնականների լիդեր Ռեդմոնդ յայտարարում է, որ ինքն իրեն դրել է իշխանութիւնների տրամադրութեան տակ՝ նրանց հետ համագործակցելով, և հրահանգել է ամբողջ Իրլանդիայի ազգայնականներին ու կամաւորներին, որ պատրաստ լինեն աջակցելու զինուորական իշխանութիւններին։ Բացի Դուբլինից, կամաւորները շատ վայրերում ինքնաբերաբար խմբեր կազմեցին աջակցելու համար կանոնաւոր զօրքերին։

ԼՈՆԴՈՆ, 17 ապրիլի.— Հաղորդագրութիւն Ֆիլդմարշալ Ֆրենչի. Շաբաթ, ցերեկուայ 1 ժամ 30 ր. Դուբլինի գրութիւնն այսօր նշանակելիօրէն լաւացաւ, սակայն ապստամբները տակաւին լուրջ դիմադրութիւն էին ցոյց տալիս Սակիվիլստրիտի կից շրջանում։ Այդ թաղամասի շրջապատող զօրքերի շղթան հեռացուեցաւ և աւելի է սեղմուում. սակայն ամեն մի տուն կռուով վերցնելու հրաժեշտութիւնը զանդաղեցնում է զօրքերի գործողութիւնները։ Գոտեշինութիւնն ու Սակիվիլստրիտից արևելք գտնուած ուրիշ տներ կրակով չնչացուած են։ Ապստամբների խումբ վռնեց Բոլանդ Ռիվզանի գործարանից՝ աւտոմոբիլների վրայ հաստատուած թընդանօթների կրակ

...ի ժամանակ զեկավարներից մէկը լիրաւորուեց ոտքից։ Այս երեկոյ ստացած մի հաղորդագրութեան համաձայն, Լիրքը յանձնուեց առանց որեւէ պայմանի, յայտարարելով, որ Դուբլինի իր հետևորդներին լիազօրել է այդ անվանաւորութեան։ Ապստամբների մի ուրիշ զեկավար Ջին Կոնոլլին պանուեց։ Ցորկորի շրջանը, որ դեռ գրաւուած է Ֆեոյ ապստամբների կողմից, նոյնպէս շրջապատուած է զօրքերով, որոնք օղակը հետզհետէ աւելի են սեղմում։ Բոլոր տեղեկութիւնները թոյլ են տալիս դալ այն եզրակացութեան, որ ապստամբութեան ճնշումը Դուբլինում մօտենում է իր վախճանին։ Ապստամբների մի մեծ թիւ գերի է վերցուած։ Իրլանդիայի մեացած մասից այս երեկոյ ստացուած հաղորդագրութիւնները գործերի դրութիւնն ընդհանրապէս գոհացուցիչ են ներկայացնում։ Բելֆասում և Ուլստերում կացութիւնը բնականոն է, Լոնդոնդերիում նոյնպէս բաւարար։ Գալուէյի շրջանում դրութիւնը բնականոն է, սակայն ապստամբների մի խումբ է հաւաքել Ատենրի և Կրոզէլլի միջև։

(Շարունակութիւնը դեռ չէ ստացած)

ՊՈՎԷ ՎՐԷՑ

ԼՈՆԴՈՆ, 15 ապր.—«Ռուսսէլ» զբաղակիրը շինուած էր 1901 թ-ին։ Մարզկանցից ազատուեցին կոնտր-ծովակալը հրամանատարն ու 22 սպաներ։

ԼՈՆԴՈՆ, 15 ապր.— Անգլիական անդէն «Ինդուստրի» շոգենաւն ընկղմուեց Թշնամու սուզանաւի կողմից։ Նաւաստիները բաց նաւակների մէջ թողուեցին ովկիանոսում, ծովափի ամենամօտ կէտից 120 մղոն հեռաւորութեան վրայ։ Նաւաստիները վերցուեցին ամերիկեան «Ֆինլանդ» շոգենաւի կողմից։

ՍՏՈԿՀՈԼՄ, 16 ապրիլի.—Բերլինից հաղորդում են. Գերմանական ծովային շտաբը հաստատում է, որ անգլիացիները խորտակել են գերմանական մի սուզանաւ։

ԱԹԷՆՔ, 16 ապրիլի.— Գատրասում բռնուած գերմանական նաւերը կուղարկուեն Էլեզին։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ

ԲԱԶԵԼ, 16 ապրիլի.—Ստացած տեղեկութիւնների համաձայն, գերմանական կառավարութիւնը կը գիջէ Ամերիկայի պահանջներին և կը պատասխանէ, որ պատրաստ է միասին մշակել սուզանաւերի կանոնները։ Ըստ երևոյթին, Միացեալ-Նահանգների բռնած վճռական դիրքը չէզոք երկիրների իրաւունքների և մարդասիրութեան պաշտպանութեան համար, աղդել է Գերմանիայի վրայ, որ վերջնագրի բնոյթ ունեցող սպառնալիքների տակ ստիպուած է անել այնպիսի զիջումներ, որոնք չեն համապատասխանում մի մեծ պետութեան արժանապատուութեան։

ՌՈՒՍ ԶՕՐՔԻ ԴԵՍԱՆՏ ՄԱՐՍԷՅԼՈՒՄ

ՄԱՐՍԷՅԼ. 15 ապր.— Առաւօտեան հասան ռուս զօրքերի նոր կոնտինգենտներ, որոնք դիմաւորուեցին նոյն հանդիսաւորութեամբ զինուորական ու քաղաքական իշխանութիւնների կողմից և ողջունուեցին ազգաբնակութիւնից։

ՄԱՐՍԷՅԼ, 16 ապրիլի.—Անցնելով քաղաքի գլխաւոր փողոցներով, ռուս զօրքերը դիմեցին դէպի Միրբոր բանակավայրը աղմկալի ովացիաների ուղեկցութեամբ։ Ռուս սպաների և զինուորների պատուին պաշտօնական ընդունելութիւն տեղի ունեցաւ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 16 ապր.— Գիշերուայ ժամը 12-ին Ֆինլանդեան երկաթուղագծի արտակարգ գնացքով հասաւ Պաշիչը՝ ընկերակցութեամբ արտաքին գործերի մինիստրի օգնական Իսվանովիչի և քարտուղար Եանկովիչի։ Պետրոգրադի կայարանում զիմաւորեցին արտաքին գործերի մինիստրի օգնական Ներատովը, Սերբիայի ռուսական պատուիրակ իշխ. Տրուբեցկոյ, պետական կազմակերպութիւնների և ընկերութիւնների ներկայացուցիչները։ Ազգաբնակութիւնը ովացիա տարբեց։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԲԱԶԵԼ, 16 ապր.— Երեկ գերմանական մի ինքնաթիռ անցաւ շուէյցարական սահմանը և ռումբեր ձգեց Ֆրանսիական տերիտորիայի վրայ։ Շուէյցարացի զօրքերը կրակ բացին նրա վրայ։ Շուէյցարիայի չէզոքութեան այդ նոր խախտումը խիստ վրդովմունք է առաջացնում։ Ստեղծուած դրութիւնը քննելու համար կանչուում է Բերլինի շուէյցարական պատուիրակը։

ԲԵՐՆ, 16 ապրիլի.—Պաշտօնապէս հաղորդուում է. Գերմանական կառավարութեան յանձնարարութեամբ գերմանական դեսպանը անկեղծ ցաւ յայտնեց այն բանի առթիւ, որ գերմանական օդանաւը երեքշաբթի օրը նորից խախտել էր Շուէյցարիայի չէզոքութիւնը։ Դեսպանը յայտարարեց, որ օդաչուն արձակուած է ծառայութիւնից։ Բացի սրանից, գերմանական բանակի օդաչուներին խստիւ արգելուած է այսուհետև թռչել շուէյցարական հողի վրայով։ Գերմանական կառավարութիւնը մտադիր է խուսափել Շուէյցարիային գժգոհութիւն պատճառող նոյնիսկ աննշան առիթներից։ Սրանից յետոյ Բերլինի շուէյցարական դեսպանը քաղաքական դեղարտամենտի տեսչի հետ խորհրդակցութիւն ունեցաւ, որից յետոյ տեղի ունեցաւ դաշնակցական խորհրդի նիստը, ուր ընդունուեց գերմանական կառավարութեանն ուղղելիք բողոքի բնագիրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՇԷՍ ՍՈՒՃԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, ապրիլի 17-ին Վանքի աւագ եկեղեցին, բակը և շրջակայքը լեփ լեցուն էր բազմահազար մասսայով։ Թաղում էին հայկական ազատամարտի անձնուրաց զինուորներից մէկին։

Նոյն ժամանակ կրկնապատկելով ճանապարհին, հետևեց դագաղին մինչև Քոշիվանքի գերեզմանատունը, ուր և հողին յանձնուեց ժողովրդական հերոսը։ Անագին թիւ էին կազմում Ախալցխայից եկած իր հայրենակիցները։ Դագաղի առաջից և յետևից տանում էին բազմաթիւ պսակներ։ Կարգը, որ օրինակելի էր այդքան ամբոխի մէջ, պահպանում էին ընկերները և զինակից մարտիկները, շղթայ կազմած սպահանդէսի ամբողջ երկարութեամբ։

Գերեզմանի վրայ արտասանուեցին ճառեր, բոլորն էլ տոգորուած հիացմունքով Արտաշէսի գործունէութեան և խոր թախիծով — նրա վաղահաս մահուան առթիւ։

Թաղումից յետոյ ժողովուրդը օվացիաներով ճանապարհ գցեց դէպի քաղաք յուղարկաւորութեանը մասնակցող հայ մարտական և կամաւորական շարժման գլխաւոր հերոսին։

ԱՐՏԱՇԷՍ ՍՈՒՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ախալցխա, 15 մայիսի
(Հեռագրով)

Ողբում եմ հայրենակից և զինակից Արտաշէս Սուճեանի մահը, որ 15 տարի զէնքը ձեռքին կուռել է հայ ժողովուրդը թիւրքական լծից ազատագրելու համար և ընկաւ հերոսական մահով կուի դաշտում։

Ուսուլ Խաչօ

Ղարաքիլիսա, 15 ապրիլի
(Հեռագրով)

Դառնապէս ողբում եմ ընկեր Արտաշէսի հերոսական մահը։

Սեփան

(Հեռագրով Հին-Նախիջևանից՝ Արտաշէսի եղբայր Թորչին)

Խորապէս վշտացած ենք փառաւոր կուի մէջ իր հայրենիքի համար հերոսաբար նահատակուած մեր թանկագին և անմոռանալի բարեկամ և ընկեր Արտաշէսի մահուամբ։ Ցաւում ենք, որ չենք կարող ձեզ հետ միասին ներկայ լինել նրա թաղմանը և ձեզ հետ միասին ողբալ նրա մահը։ Ցաւակցութիւն ներս յայտնեցէք ընտանիքին։

Գապօ, Զանազան, Յովսէփ և Աղաւնի Բոլիբեկեաններ։

Մեր սրտի կսկիծն ենք յայտնում, հերոսի անժամանակ մահուան առթիւ նրա ընկերներին, ծնողներին և բարեկամներին։ Սակայն թող ոչ ոք չըտրտնջայ, այլ պարծենան, որ իրենց սիրելի հերոսը, հայրենասիրական տենչով մղուած՝ արեան սոսկումների գիրկը նետեց իրեն։

Առիւ Սիւճի իր զինուորներով

Մենք շատ էինք, մեր ճամբան՝ մէկ էր և շատ դժուարին, շատ երկար... Ու գնացինք՝ դեռ պատանի՝ այդ ճամբայով իրար հետ։ Ուխտ ունէինք, սրբազան ուխտ փուլ ու տատակ այդ ճամբին. ուխտ ունէինք—պահանջում էր մեր արիւը, մեր հոգին... Ու այդ ճամբին շատերն ընկան, շատերն էլ կան այդ ճամբին։ Շատերն ընկան, դու էլ ընկաւ հերոսի պէս, մեր անդին... Ա՜խ, մեր դառը դեռ չաւարտած՝ սեգ աչքերդ փակուցան և արծիւների խիտ շարքերը նորէն, նորէն նոսրացան... Ա՜րդ, վշտաբեկ, ծունկի գալով հողաթումբիդ, ընկերական մեր յարգանքն ենք մատուցանում, մեր անդին դնելիք։

Ուսուլ Խաչօ, Հաջի Լեոն, Աշիկ։

ՈՐԲԱԽՆԱՄ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ գարունը, կը գայ շուտով և ամառը, բայց ինչ են մտածում նրանք, որոնցից կախուած է որբերի բախտը։ Արարատեան դաշտում կան շատ որբանոցներ, օրինակ՝ Իզդիրում, Վաղարշապատում, Աշտարակում, Երեւանում և ուրիշ մի քանի տեղեր։ Ում յայտնի է Արարատեան դաշտի կլիման ամառ ժամանակ, նա կարող է ասել, որ այդ որբերը չեն կարող դիմանալ և նրանց կէսը կոչնչանայ շընորհիւ վատ կլիմայի և ջրի։

Լաւ չէր լինի, եթէ Արարատեան դաշտի որբանոցները բոլորն էլ տեղափոխէին կամ Դիլիջան, կամ Ղարաքիլիսա և կամ Ջալալ-Օղլի։ Պէտք է աւելացնել, որ այն տեղերում, որտեղ գտնուում են այժմ որբերը, կեանքը սաստիկ և սաստիկ թանգ է. օրինակ հենց Աշտարակ գիւղում որբերի համար իրը տան վարձ տալիս են ամսական 170 ռ., ջրի համար ամսական 150 ռ., փայտի համար սահմանին 80 ռ., իւղի ֆունտին 1 ռ. 40 կ., մի բաժակ կաթին 5 կ., ձի հատին 3 կ. և այլն, այն ինչ, մենք հաստատած ենք, որ թէ Դիլիջանում, թէ Ղարաքիլիսայում և թէ Ջալալ-Օղլում այդ ամենը աւելի արժան կը նստի։ Թող մտածեն այս մասին նրանք, որոնց համար թանգ է մեր որբերի վիճակը։

Թ. Գրիգորեան

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Այս օրերս Պետրոգրադի Երդեալ հաւատ. Սիմէօն Աստուածաբանից Մեսրոպ եպիսկոպոսը ստացաւ 1,000 ռ. նէր, որպէս զի ըստ իր հայեցողութեան գործադրի յօգուտ փախստականների։ Առաջնորդը որոշել է այդ գումարը յանձնել գաղթ. գործին լաւ ծանօթ Ալ. Շարաֆեանին, որ սա Վանի ճանապարհին, Թափարիզի բարձրունքի վրայ սննդատու կայան հիմնի յատկապէս փախստական երեխաների համար։

✦ Հոնգ-Կոնգ (Ընդ. Զինաստան) քաղաքից Ցարութիւն Աբգարեանը մի նամակով յայտնում է Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին, որ ինքը նրա անունով ուղարկել է Թիֆլիս $^1/_2$ կիլո մորֆի գործադրելու Թիֆլիսի և Վանի շրջանում գտնուող հիւանդ գաղթ. բժշկելու համար։

✦ Երեկ, ապրիլի 18-ին Առաջնորդը ստացել է Թէոդոսիայի հայկական կոմիտէից 500, Մայկոպի Հայկ. կոմիտէից 300 ռ. յօգուտ գաղթ.։ Դրանցից առաջինը առաջարկում է իր զբաղած գումարը ուղարկել Տրապիզոնի հայ փախստական. համար։

✦ Կիրակի, ամսոյս 17-ին, Թիֆլիսի առաջնորդարանում տեղի ունեցաւ գաղթ. նպաստող հայ ընկերութիւնների միութեան ժողովը, որի մէջ որոշուեց կազմակերպել մի գործադիր մարմին բաղկացած 3 լիազօրներից, որոնցից մէկը լինելու է ներկայացուցիչ Հայոց Գիւղատնտ. ընկեր. և նրա գաղթ. կոմիտէի, 2-րդը Կ. Հ. Բ. ընկ. և նրան կից կենտրոնական կոմիտէի, իսկ 3-րդը «Նպաստամատոյց» ընկ. և Վերաշինութեան յանձնաժողովի։ Լիազօրներ ընտրուեցին Գիւղատ. ընկ. կողմից Արշակ Թադէոսեան, «Նպաստամատոյց» ի կողմից Ստ. Մալխասեան, իսկ Կ. Հ. Բ. ընկ. հարցը մնաց անորոշ։

✦ Գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշևի կարգադրութեան համաձայն, Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութեան յատկացուած է 120,000 ռ., որը գործադրելու է Վանի շրջանի փախստականների համար անասուններ, սերմացան և երկրագործական գործիքներ գնելու համար։

✦ Գաղթական վարչութեան անդամ Արղութեան-Երկայնաքաղուկը, դէպի Տրապիզոն կատարած իր ճանապարհորդութիւնից վերադառնալով, մի զեկուցում է կարդացել Գաղաք. Միութեան կոմիտէի վերջին նիստում, որի մէջ շեշտել է, որ անհրաժեշտ է Տրապիզոնում բանալ մի որբանոց-ապաստանարան 300—350 որբերի համար։

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Մեզ հաղորդում են, որ Պետական Դումայի անդամ պ. Միք. Գապոչնանը չի ուղևորուում դէպի Անգլիա, ինչպէս հաղորդել էին Մոսկուայից, և ներկայ կը լինի հայ կազմակերպութիւնների յանձնի սկզբներին Պետրոգրադում կայանալիք համագումարին։

✦ Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկ. ստացած տեղեկութիւնների համաձայն, որոնք ստացուած են Վանից, երևում է, որ Ամերիկայի Մակկլուրի խումբը իր գործունէութեան շրջանը ընտրել է Հայոց-Զորը։ Գիւղատնտեսական ընկերութեան գործակալները ևս այժմ աշխատում են Բերկրիում, «Նպաստամատոյցի» ներկայացուցիչները Թիմարում։

✦ Ամենայն Հայոց Կաթուղիկոսը դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեանը և խնդրել, որ Անդրէևակայեա փողոցի վրայ գտնուած հողամասը շուտով յանձնի հայ-կաթոլիկներին, որպէս զի նրանց (հայ-կաթոլիկների) եկեղեցու և դպրոցի կառուցման գործը չյետաձգի։ Այդ հողամասի յանձնման արգելք է հանդիսանում և այն հանգամանքը, որ դեռ չի ստացել Լ. Կ. Զուբայովի 35,000 ռ. նուիրատուութիւնը։ Հայ-կաթոլիկների եկեղեցու և դպրոցի յատակագիծն արդէն պատրաստուած է։

✦ Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի կոմիտէն Տրապիզոնում բացել է բակտերիոլոգիական լաբորատորիա և աղքատակչութիւնը սիֆ ու խոլերա հիւանդութիւնից զերծ պահելու համար ձեռնարկել է պատուաստման գործին։ Ախատհանական խմբի կառավարիչ բժ. Բարիկինին ուղարկուած է ախատհանական մի ուրիշ խումբ։ Վերոյիշեալ Միութեան կոմիտէն կազմակերպում է տեխնիկական-բաղնիքային մի նոր խումբ, որը ուղարկելու է Ծովամերձ շրջանում բաղնիքներ և լացարաններ հիմնելու համար։

✦ Ապրիլի 13-ին «Союзъ Коопѣръ»ի վարչութեան նախաձեռնութեամբ կատարուած մի օրեայ արկղիկներով ժողովարարութիւնը տուել է ընդամենը 6,400 ռ. մուտք, որից 1,500 ռ. հընչին դրամ է։

✦ Քաղաք. վարչութիւնը որոշել է տրամուայի գիշերային երթևեկութիւն հաստատել մինչև գիշերուայ ժամը 2 ը. պիտի բռնեն 12—14 վագոն։ Վագոններից մեծ մասը հաղորդակցութեան պիտի դնեն կայարանը Երևանեան հրապարակի հետ՝ Վերայի և Նիկոլաևսկիի կամուրջներով։ Իսկ Ցարսկոյէ Սելոյի մի քանի վագոնների երթևեկելու են մինչև Կախեթինսկի հրապ.։

✦ Երեկ, ապրիլի 18-ին, Թիֆլիսի շերամաբուծական կայարանին կից բացուեցին հանրային դասընթացքներ մետաքսագործութիւն և շերամաբուծութիւն սովորեցնելու համար։ Կուրսերին մինչև այժմս ցուցակագրել են 60 հոգի, որոնցից 48-ը ուսուցիչ-ուսուցչուհիներ են Կովկասի զանազան շրջաններից։ Դասընթացքները տևում են մինչև յունիսի 1 ը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 13 ապրիլի

Ընտրութիւնների նախօրեակն է ապրում Շուշին։

Ընտրութիւն Շուշայ փոխադարձ վարիչ վարչութեան կազմի։ Ընտրութիւն Մարիամ-Ղուկասեան դպրոցի հոգաբարձութեան։ Ընտրութիւն, վաղը՝ միւս օրը, Շուշայ Քեմական դպրոցի հոգաբարձութեան, որի ժամանակը դեռ մի տարի առաջ է լրացել և որի մասին չգիտենք, թէ ինչու մինչև այսօր չի նշանակուում ընտրութիւն։

Շուշայ հասարակութիւնը կանգնած է ծանր պատասխանատուութեան առաջ—խղճի պատասխանատուութեան, որը վեր պէտք է հանարի ամեն պատասխանատուութիւնից։

Պէտք է նա հաշիւ տանի իր խղճի հետ և ապա թէ մոռանայ այն քէաւոփերին, որոնց վրայ ի ցոյց դրուած են արժանաւոր անուններ—հասարակական, դպրոցական գործը լուրջ կերպով դիտակցող, ամեն անձնականութիւնից վեր դասող և անձնուէր մարդկանց անուններ։

Եւ որ գլխաւորն է, գործի եռեռից գնացող, իր հասարակական պարտականութիւնը ճանաչող ու կատարող անձնաւորութիւններ։

Դառն փորձերը ցոյց են տուել, որ մեզանում, մարդկանց մէջ, մի անմիտ ձգտում կայ, մի սէր—թող ասեմ փառասիրութիւն—ընտրելու և գործի եռեռից չդնալու։

Շատերի էլ նպատակն այլ է. ընտրել իրենց ցանկացած տեսուչը, կազմել ուսուցչական խումբ իրենց մարդկանցից և այնուհետև դպրոցի երես չտեսնել։ Ինչ փոյթ, թէ դրանով դպրոցական գործն է զնաւում։

Եւ այդպէս, ընտրուում են ու տեսնում էք, որ հոգաբարձական կազմ կայ թղթի վրայ, փառաւոր անուններ, որոնք կազմել են խումբ. իսկ դպրոցի դռանը, գործի ժամանակ, 12 հոգուց միայն մէկն է երևում կամ երկուսը։

Եւ սա կոչուում է հասարակական պաշտօնէութիւն։

Վերջ պէտք է լինի այս խաղերին։

Եւ յետոյ՝ նոյնչափ անմիտ մի ցանկութիւն է՝ ընտրել հարուստներին, թէկուզ լինին նրանք բացակայ և ամբողջ տարիներ—կուզէք տասնեակ տարիներ—քաղաքի երեսը չտեսնող, դպրոցական գործից տեղեկութիւն չունեցող և նրանով չհետաքրքրուող։ Թէ ինչ է նա դրսում աւելի շատ բան կարող է տեսնել դպրոցի համար, օրինակ՝ դրամ հանդանակել, քան ներսում, որի փորձերը սակայն... Մեացել են փորձեր։ Մուրացկանութեան մի տգեղ ձև...

Բանի որ աւելի հերթական խնդիր է Մարիամ-Ղուկասեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը, ուստի մի կարևոր հանգամանք ենք տեսնում այդտեղ, որը կարօտ է լուսաբանութեան։

Գաղտամաւորական ընտրութիւնների ժամանակ ընտրել են անձնաւորութիւններ, որոնք հոգաբարձու են Քեմական դպրոցի։ Նոյն այդ պատասխանները պիտի գնան առաջնորդարան և ընտրեն հոգաբարձուներ Մարիամ-Ղուկասեան ուսումնարանի համար։—Արդեօք կարող են նրանք ընտրելի համարուել այդ դպրոցում, քանի որ հոգաբարձու են մի այլ դպրոցում, Քեմականում, որոնց երկուսի շահերը տարբեր են և որոշ խնդիրներում կարող են բաղխել իրար։ Օրինակ՝ կան խնդիրներ հասարակական տուրքի, նիւթաբերութեան և այլն, որոնց լուծման ժամանակ հոգաբարձուն չպիտի իմանայ, թէ որի՞ շա՞ը պաշտպանէ, որի՞նը դերադասէ։

Մեկական կանոնադրութեան մէջ, և կարծում ենք դպրոցական կանոնների մէջ ևս, չի նախատեսուած այդ հանգամանքը։ Իսկ մեր կարծիքով չպէտք է Մարիամ Ղուկասեանում հոգաբարձու ընտրուեն նրանք, որոնք միաժամանակ հոգաբարձու են Քեմական դպրոցում։ Այլ նրանք—պէտք է ունենան տարբեր կազմ, տարբեր անձնաւորութիւններից։

Ինչպէս է արդեօք Ներսիսեան և Յովհաննեան դպրոցներում։

Միասար

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԲՈԼՆԻՍ ԽԱՉԷՆ — Գիւղացիք անցեալ նոյեմբեր ամսին գիտել են կառավարութեանը պետական հնգամեայ նպաստ ստանալու համար։ Դեկտեմբերի վերջերին յատկացուել է մեր (Քվեշու) շրջանի գիւղերին 74 հազար ռուբլի՝ ցորեն գնելու նպատակով։ Ցունուարին ցորենը գնուած է Գարամանովից և ճանապարհ գցած (ինչպէս ասում են), բայց ցայսօր չէ ստացուած։ Մարտի 26 ին տեղս ժամանեց գաղթականների գործով առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Մարելկով գաւառապետի հետ միասին։ Գիւղացիք նրան ևս դիմել են ցորենի առթիւ։ Նա պատասխանել է, որ կարող է պատահել մինչև սեպտեմբեր չստանան։

— Անցեալ տարի խաղողի բերքը բոլորովին չեղաւ։ Գարմառը անձրևային եղանակն ու կարկուտն էր և այգիները հիւանդութիւններից չբժշկելը։ Արշասպն ու ծծումբը առասպելական գների էին հասել և չէին էլ ճարուում։ Այս հանգամանքների անխուսափելի հետևանքն է և այս տարուայ այգիների անպէտքութիւնը։ Գիւղացիք այս տարուայ բերքի վրայ ևս խաչ են քաշել, մանաւանդ որ մշակող ձեռքեր էլ չկան։ Շատ հոգեր մեացել են անմշակ։

Մ. Աւո

ՋԱՀՈՒԿ (Հին-Նախիջևանի գաւ.)— Մարտի սկզբից մինչև այժմս անձրև գնաւ չէ հիլ և գիւղացիք ստիպուած աշնան ցանած ցորենները ջրում են։ Կատարեալ երաշտ է անցեալներում Զահուկի գետից գարնանամտին անցնել չէր լինում, իսկ այս տարի խմելու ջուր անգամ չկայ և գիւղացիք գնում են հեռու տեղերից բերում. եթէ այսպէս շարունակի, ոչ մի պտուղի երես չենք տեսնի։

— Մեզ մօտ ևս գաղթականներ կան և այս օրերս կրկին եկան, բայց ցանկութիւն ունին շուտ վերադառնալ և գիւղացիներից կայ ընտրուած մի մարմին, որը աշխատում է շուտ իրականացնել նրանց ցանկութիւնը։

Կ. Մխիթարեան

ԹՈՒՐՔԱՑ ԿԵԱՆՔ

ԽԻՒԱ, ԲՈՒԽԱՐԱ, ԱՖՂԱՆՈՏԱՆ

«Աչքի-Սէօզում» կարդում ենք հետևեալը.—«Թիւրքի» դէպքերի առթիւ «նով. Վր.»ի յօդուածից յետոյ, որով առաջարկուում էր այս երկրի անուանական անկախութիւնը խլել նրա ձեռքից, այս անգամ էլ «Туркестанскій Кур.» այս երեք երկիրների մասին գրած մի յօդուածում նկատում է, որ նրանք անկախ ապրելու իրաւունք չունին, քանի որ նրանց գոյութիւնը կապուած էր ռուս-անգլիական մրցակցութեան հետ։ Հիմա այդ մրցակցութիւնը վերացել է, ուստի և այդ երկիրներն էլ պիտի վերանան։ Աֆղանստանը պէտք է մեացի անգլիական կալուածներին, իսկ Խիւան ու Բուխարան էլ Ռուսաստանին։ Թերթը միաժամանակ մատնանշում է, որ այս երկիրները պատժութիւն, սեփական հին քաղաքակրթութիւն չունին։

«Վակէտը» այս յօդուածների մասին այսպէս է արտայայտուում.

«Պնդել, որ Խիւայի և Բուխարայի վարչակերպն այսպէս կարող է շարունակուել, անկարելի է։ Նրանք չեն կարող այդ ձևով ապրել։ դա պարզ է։ Չենք կարող համաձայնել և այն մտքին, թէ այս երկրներում Ռուսաստանի աջակցութեամբ բարենորոգում մտցնելն անհնար է։ Ռուսաստանը եթէ ցանկանայ, կարող է դիւրաւ իրագործել այդ բարենորոգումները։

Մինչև հիմա լուրջ փորձ չէ եղած հին կարգերը փոխելու։ Տեղական իշխանութիւնները շարունակում են իրաւազուրկ դրութիւնը պահպանել։ Ոչ ոք չկայ հարցնող, թէ ինչո՞ն են այդպէս վարուում։ Դատարանական, դպրոցական բարենորոգումների մասին ոչ ոք չէ մտածում։ Թէ ինչպէս կարելի կը լիներ կարճ ժամանակում մի ազգ քաղաքակրթել, դրա ապացոյցն է Եգիպտոսի մէջ Անգլիայի մտցրած առաջադիմութիւնն ու աշխարհաշինութիւնը։

Սխալ է ասել, որ Խիւան ու Բուխարան անցեալներում պատմութիւն ու քաղաքակրթութիւն չեն ունեցել։ Ճարտարապետական հոյակապ շէնքերը, մեծ դպրոցներ, քարանտարաններ ու մզկիթներ, ջրի ամբարակներ, գրավաճառանոցներ, աշխարհահռչակ գիտնականներ ցոյց են տալիս, որ Խիւան ու Բուխարան ունին պատմութիւն ու քաղաքակրթութիւն։

Զմոռանանք և այն, որ Անգլիայի և Ռուսաստանի միջև այսուհետև մրցակցութեան կարիք չմնաց։ Անգլիացիների կասկածը մեր մասին վերացաւ։ Կարծիքի իրականանալու համար դեռ մի քիչ ժամանակ պէտք է անցնի։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԳԱՌԱԳՏՈՒՄԸ

II

«Իրաւունքներից զրկեցին» 17 պատգամաւոր։ Սրանցից կազմուած նոր ֆրակցիայի մէջ է մտել նաև Է. Բերնշտայնը, որը սաստիկ վրդովուած է մեծամասնութեան ցոյց տուած բռնկումից։

Փոքրամասնութեան խմբակի ամենից աւելի ակնառոր ներկայացուցիչները անցեալում յայտնի են եղել, իբրև ռեդիկալիզմի հակառակորդներ և ահա այդ նկատառումներով Բերնշտայնի դրութիւնը նոր ֆրակցիայում միանգամայն բացառիկ է։ Նա ստիպուած է պոլեմիկայի մէջ մտնել նրանց հետ, ովքեր առաջ նրա մերձաւոր համախոհներն էին։ Առաջին յօդուածը, որ Բերնշտայնը տպագրել է ուել «Vorwärts»-ի մէջ պատասխանի առթիւ, ուղղուած էր Է. Դաւիդի դէմ, որը նրա զինակիցն էր՝ մարքսիստական ուղղափառութեան դէմ կռուելու գործում։

Հաղթի ճառի ժամանակ Դաւիդը բացականչել է. «Ձեր քաղաքականութիւնը միայն ձգձգում է պատերազմը, դուք ծառայութիւն էք մատուցանում թշնամիներին»։ Այդ առիթ ուեց Բերնշտայնին հրապարակ գալ մի յօդուածով, որով նա մատնանշում է, որ բոլոր պարլամենտներում շատ հին ժամանակներից գործադրուում է կլտամբանքի միջոցով հակառակորդին արտաքսելու այդ անհիմն եղանակը, որ իբր նրանց ճառերը հայրենիքի սահմանից այն կողմ եղած թշնամիներին ձեռնտու են։ Այս արգումենտը ձեռնտու է և յարմար նրանով, որ

ոչ մի մտաւոր ջանք չի պահանջուիր. հարկաւոր է միայն յաղթահարել բարոյական քմահաճոյքի զգացումները։ Հատ էութեան,—նկատում է Է. Բերնշտայնը—չի կարելի խօսել առհասարակ արտասահմանի մասին։ Արտասահման էլ կայ, արտասահման էլ։ «Կայ կապիտալիստական-իմպերիալիստական արտասահման և կայ պրոլետար-դեմոկրատական արտասահման։ Սխալ է կարծել, որ առաջինը ողջունելու է Հաագէի ճառը։ Կապիտալիստական «Temps» և «Matin» օրգանները ծաղրանքով կը դիմաւորեն փոքրամասնութեան այդ կերպ հանդէս գալուն։ Միևնոյնը պէտք է ասել Անգլիայում լորդ-Նորտկլիֆի մամուլի վերաբերմամբ. այդպիսիներից են «Times» և «Daily Mail»։ Հաագէի ճառն ուղղուած է արտասահմանի դեմոկրատներին, այնպիսի մարդկանց, ինչպիսիք են Մնովդենը, Տրեելիանը, Զիեէն, Տուրատին և Գրամպոլինին»։

III

Ինչպէս տեսանք, ֆրակցիայի ժողովում «իրաւունքներից զրկելու» դէմ էին 33 պատգամաւոր։ Եթէ ենթադրենք, որ նոր ֆրակցիա կազմող 18 մարդը բանաձևին դէմ են քուարկէել, այն ժամանակ էլի մնում են 15 պատգամաւոր ոչ համեմատելի մեծամասնութեան հետ։ Եւ ճշմարիտ, որ պառակտումից անմիջապէս յետոյ սոցիալիստական թերթերում լոյս տեսաւ մի խումբ պատգամաւորների յայտարարութիւն, որով նրանք յայտնում էին, թէ իրենք դէմ են ձայն տալ փոքրամասնութեան զրկելուն, իսկ աւելի առաջ այդ փոքրամասնութեան հետ միասին իրենց ձայնը տուել են ժամանակաւոր նախագահին ընդդէմ։ Մարտի 24-ին ենթարկուելով կուսակցական դիսցիպլինայի պահանջներին, նրանք ընդդէմ ձայն չեն տուել, սակայն, չկամենալով նաև յօգուտ նախագահի ձայն տալ, նախապատիւ են համարել հեռանալ նիստի դահլիճից։ Սոյն յայտարարութեան տակ ստորագրել էին 15 պատգամաւոր։ Այս խմբակի հետ յետոյ համերաշխ յայտարարել են իրենց նորից հինգ պատգամաւոր։

Այսպիսով, ուրեմն նոր ֆրակցիան, կազմուած է 18 փոքրամասնական պատգամաւորներից, որոնց արդէն առաջուց միացել էին ֆրակցիայից դուրս եկած Ռիւլէն և Լիբկնեխտը։ Բացի այդ 20 ծայրայեղ ձախակողմեաններից, կան նաև 20 հոգուց բաղկացած կենտրոնի անդամները, որոնք բաւականաչափ համերաշխ են Հաագէի հետ, սակայն նախապատիւ են համարում կուսակցական դիսցիպլինան պահպանելու համար հպատակուել մեծամասնութեան։ Մնացած 70 պատգամաւորները կազմում են մեծամասնութիւն։

IV

Ռայխստագում նոր սոց.-դեմ. ֆրակցիա կազմելը չէր կարող, ի հարկէ, լուութեամբ անցնել, մանաւանդ նախկին կազմակերպութեան կողմից։ Հին ֆրակցիայի վարչութեան և կուսակցութեան վարչութեան, նմանապէս և կուսակցական խորհրդի ստորագրութեամբ մի կոչ էր հրատարակուած, որ կազմուած էր շատ խիստ տոնով։ Կոչը մեղադրում է Հաագէին և նրա ընկերներին «պրովոկացիայի», «դիսցիպլինան խանգարելու», «ուխտադրժութեան» մէջ, մի խօսքով ոչինչ չեն խնայում սեպհնելու փոքրամասնութեան խմբակի պատգամաւորներին կուսակցական մասսաների աչքում։ Կոչի մէջ ասուած է, որ մեծամասնութիւնը ոչ մի բռնութիւն չի գործադրել փոքրամասնութեան նկատմամբ, չի սահմանափակել նրանց խօսքի ազատութիւնը։ Պատերազմի սկզբից սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան անունից ռայխստագի ամբիոնից են բարձրացել 20 հոգեւոր՝ փոքրամասնականներից և 30 հոգեւոր՝ մեծամասնականներից։ Սակայն այդ յայտարարութիւնը կորցնում է իր ոյժը այն խոստովանութեամբ, թէ, ի հարկէ, մեծամասնութեան որոշումների դէմ փոքրամասնութեան հոգեւորականներին չէր թոյլատրուում արտայայտուել։ Պարզ է, որ յիշեալ 22 հոգեւորականները կարող էին արտայայտուել չէզոք խնդիրների մասին։

Այնուհետև կոչի մէջ ժամանակելով, որ մեծամասնութիւնը ամբողջ ժամանակն աշխատում էր հաւատարիմ մնալ մարքսիստական սոցիալիզմի ըմբռնումներին, կոչը այնուհետև դիմում է ներկայ ծանր ժամանակը վերլուծելուն։ Հեղինակները պնդում են, որ համաձայնութեան պետութիւնները իրենց ամբողջ յոյսը դրել են պատերազմը ձգձգելու վրայ՝ առաջնորդուելով ոչ միայն տնտեսական նկատառումներով, այլև գերմանական ժողովրդի մէջ տարաձայնութիւններ ըստեղծելու հաշիւներով։ Ֆրանսիայի սոցիալիստները, ինչպէս և Անգլիայի բանուորական կուսակցութիւնը իրենց կառավարութիւնների կողմն են, այն ինչ «գերմանական սոց.-դեմոկրատիան արդէն մի ամբողջ տարի է ամեն հընարաւոր միջոցներ ձեռք է առել, որպէսզի վերականգնէ սոցիալիստական կուսակցութիւնների միջև միջազգային կապը և բոլոր երկրներում առաջ բերէ միաժամանակեայ և միատեսակ շարժում յօգուտ խաղաղութեան»։

Կոչը վերջանում է այսպէս. «Փոքրամասնութիւնը ոչալ փաստեր չի տեսնում։ Երբէք կուսակցութիւնը այնպէս չի զգացել միութեան կարիք, ինչպէս այժմ, երբ հերթական է թանգութեան և սպառման վերաբերեալ տուրքերի դէմ կռիւ մղելը և երբ հերթի է դրուած այն հարցը, թէ ինչպէս պրոլետարիատը պէտք է կարողանայ աղդել խաղաղութիւն կնքելիս»։

Հին կազմակերպութեան կոչը եղաւ սկիզբ այն վիճաբանութիւնների, որ մինչև այժմ էլ չի վերջացել. «սոց.-դեմ. աշխատաւորական միութեան» կողմից այդ վիճաբանութիւնները տարուում են աւելի զսպած տոնով, քան մեծամասնութեան ներկայացուցիչների կողմից։

Կուսակցական մամուլում ձայները բաժանուել են։ «Vorwärts»ում առաջ են բերուած մի քանի տասնեակ կարծիքներ՝ քաղուած մի շարք լրագիրներից։ Սոց.-դեմ. կուսակցութեան 35 օրգաններից առաջին շաբաթուայ մէջ բաւականաչափ պարզ և որոշակի կերպով Հաագէին պաշտպանում էին $^1/_3$ մասը, նոյնքանն էլ դէմ էին. մնացածները կամ զեկուցանում էին միայն և կամ կանգնած էին հաշտեցուցիչ տեսակէտի վրայ։

Բնորոշն այն է, որ այստեղ էլ ամենախիստ տոնով արտայայտուում են աջակողմեան թեւի օրգանները։ Այսպէս, օրինակ «Volksblatt für Anhalt»-ը խորհուրդ է տալիս չվախենալ պառակտումից, որովհետև եթէ հին կազմակերպութիւնը կորցնում է իր կողմնակիցներից մի քանիսին, սակայն նրանց փոխարէն ձեռք է բերում նոր անդամներ այն շարքերից, ովքեր առաջ սոցիալ-դեմոկրատներ չէին։

Թէպէտ և այժմ կրքերը քանի զբնում բորբոքուում են, սակայն հաղիւ թէ վերջնական պառակտում տեղի ունենայ։ Պատերազմը վաղ թէ ուշ կը վերջանայ և նրա հետ կապուած խնդիրները, որքան էլ որ կարևոր լինին այժմ, վերջը կը կորցնեն իրենց հրատապ լինելը և նրանց վրայ չէ որ պէտք է կառուցուի կուսակցական խմբակցութիւն։ Անշուշտ կուսակցական համագումարը կը գայ և կաշխատի ամեն կերպ հանգցնել այդ բորբոքած կրքերը և նորից ի մի ձուլել։

ԱՐԻԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹ.

ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹ.

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ներկայ ապրիլի 14-ին կայացաւ Հայոց Ազգագրական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Նախագահ պ. Հ. Մելիքեան ժողովը բանալով հրաւիրեց ընտրել ժողովի նախագահ. միաձայն ընտրուեց պ. Միքայէլ Արամեան։ Անցնալ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը կարդալուց յետոյ՝ պ. Ե. Լալայեան զեկուցեց Ընկերութեան անցնալ տարուայ գործունէութեան մասին։ Նա ասաց, որ անցնալ աղէտաբեր տարին, որ սպառնում էր բնաջինջ անել ոչ միայն տաճկահային, այլև տաճկահայոց դարաւոր կուլտուրան, ստիպեց Ազգագրական Ընկերութեան եռանդուն գործունէութեան, կորցրեց ազատելու գոնէ հայկական ձեռագիրները, որի համար դեռ Վանի նահանգից առաջ նա դիմեց Վեհափառ Կաթուղիկոսին, զանազան ընկերութիւնների, ձեռք բերեց բաւականաչափ ձեռագրներ և հրատարակեց Վասպուրականի Ձեռագիրների Ցուցակի I հատորը։ Բացի սրանից, նա կազմեց մի արշաւախումբ տաճկահայ 7 մտաւորականներից պ. Ե. Լալայեանի ղեկավարութեամբ, ստանալով Նպաստամատոյց Ընկերութիւնից և «Մշակի» խմբագրութիւնից հազարական ռուբլի։ Արշաւախումբը 3 ամիս ու կէս գործելով հաւաքեց 762 էջքիաթ, երկու տուար հատոր ժողովրդական երգեր, երկու հատոր կենդանական վէպ, Մուշ-Տարօնի ազգագրութիւնը և տաճկահայոց կոտորածների և փախստեան վերաբերեալ նիւթեր։

Սրանից յետոյ որոշեց առաջին հնարաւոր դէպքում մի արշաւախումբ կազմել դէպի նոր նուաճած Հայաստանը՝ թէ ձեռագիրներն ու հնութիւնները կորստից ազատելու և թէ ազգագրական, պատմական, հնագիտական հետազօտութիւններ կատարելու։

Ռուսահայոց ժողովրդական բանահիւսութեան վրայ ևս ուշադրութիւն դարձնելով Ընկերութիւնը պատրաստել է տ. Հ. Մարտիրոսեանի նպաստով հրատարակւող «Մարգարիտներ Հայ Բանահիւսութեան» IV և V գրքերը։

Ազգագրական հանդէսը չէ հրատարակւել, որովհետև նիւթեր չեն եղել. նիւթեր ունենալու համար հարկաւոր են էքսպեդիցիաներ կատարել, որ կախուած են նիւթական միջոցներից։ Այսպիսի մի էքսպեդիցիա կատարել է Ե. Լալայեանը, ուսումնասիրելու Ուդիներին, նիւթական նպաստ ստանալով Ռուսաց Աշխարհագրական և Մոսկուայի Հնագիտական Ընկերութիւնների Կովկասեան բաժանմունքներից։ Այժմ նիւթեր կան, ուստի և Խորհուրդը իր չորս անդամներին՝ պ.պ. Մելիքեանին, Մելիք-Ազարեանին, Խունդրոյին և Խալաթեանին խնդրել է յանձն առնել հրատարակութեան ծախքը (850 ռ.)։

Գրագարանում եղել է 7182 կոտոր գիրք, իսկ այժմ կայ 7612, բացի գրքերից հանգուցեալ Ե. Թիւնիբէկեանի և այլ երկու անձնաւորութիւնների գրադարանները խոստացել են նուիրել։ Տիկ. Ն. Նունուֆարեան ի յիշատակ իր որդու նուիրել է մի հազար ռուբլի և խոստացել է ամեն տարի հարիւրական ռուբլի նուիրել, յատկապէս հայագիտական գրքեր գնելու։

Թանգարանի վերաբերմամբ առանձին ուշադրութիւն դարձուած է տարազների վրայ, գնուած են հայ փախստականներից բաւականաչափ տարազներ և կազմուած է մի մանաժողով նկարիչներից՝ գունաւոր կերպով նկարելու և ուսումնասիրելու հայկական բոլոր տարազները։

Դասախօսութիւններ տեղի են ունեցել ոչ այնքան յաճախ, որովհետև պատերազմը հասարակութեան մտքերն այնպէս լարել է, որ գիտական խնդիրներով զբաղելու տրամադրութիւն չունի։

Ընկերութեան Թանգարանի շէնքը հաւանօրէն կը սկսի շինուել պատերազմից յետոյ։

Այս զեկուցումից յետոյ՝ պ. Մելիքեան կարդաց 1915 թուի հաշիւը, որից երևաց, որ ընկերութիւնը ունեցել է 8165 ռ. 63 կ. մուտք և 7022 ռ. 12 կ. ելք։ 1916 թուի համար կազմուած նախահաշիւը ելքն ու մուտքը հաւասարուած է 14,056 ռ. 33 կ., որից հրատարակութիւնների համար՝ 8,300 ռ., գրքեր գնելու 1,100 ռ., թանգարանի համար 500 ռ., փախստականներից ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու 1,000 ռուբլի և էջմիածնի գաւառի հնութիւնները ուսումնասիրելու 700 ռուբլի (սոյն գումարը նուիրել է պ. Ա. Վաչեանը)։

Անցնելով ընտրութիւններին, ժողովը միաձայն վերընտրեց բոլոր վիճակով հեռացած անդամներին, իսկ խորհրդի կամով հրաժարուած մի անդամի փոխարէն միաձայն ընտրեց պ. Միքայէլ Արամեանցին։

Ժողովի վերջում պ. Արամեանց առաջարկեց ոտքի կանգնելով յարգել վաղամեռիկ Գէորգ Նունուֆարեանի յիշատակը, որի համար նրա մայր Նատալիա Նունուֆարեանը նուիրել է մի հազար ռուբլի։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Бирж. Вѣд.»-ին հաղորդում են, որ Պոլսի փողոցներում փակցուած են Էնուէրի յայտարարութիւնները, որոնցով 17 տարեկաններին կոչ է անուում իբրև կամաւոր բանակ մտնելու։

— Սոֆիայի վրայով Թիւրքիա են ուղարկուում աւստրիական զօրքեր՝ ճնշելու համար Տրապիզոնի անկման պատճառով ծագած ժողովրդական յուզումները, որոնք ուղղուած են գերմանացիների դէմ։

— «Daily Mail»-ը Իրլանդիայի ապստամբների թիւը հաշուում է 12,000 հոգի։

— Նկատի ունենալով, որ Սալոնիկի առգիս մնացել են զրեթէ միայն բոլգարները, դաշնակիցների համար խիստ բարեյաջող բոպէ է հանդիսանում յարձակման դիմելու Բալկանեան թերակղզին յետ թելելու և Եւրոպայում մնացած թիւրքերին ջարդելու համար։ Հաշուում են, որ Սալոնիկում կենտրոնացած են 320,000 անգլո-ֆրանսիացիներ և 40,000 սերբեր, Եգէյեան կղզիներում կան 100,000 անգլո-ֆրանսիացիներ։ Վերջերս չերնոզորական մի քանի զօրախմբեր ևս ճղելով անցել են դէպի Սալոնիկ։ Բոլգարիային մեծ մտահոգութիւն է պատճառում այն հանգամանքը, որ Ռումինիան կարող է անցնել դաշնակիցների կողմը։ Դրութիւնը Բալկաններում այժմ բարդ է և խառն։ Այս գարնանը կը վճռուի այնտեղի վիճակը։

—«Daily Tel.»-ին հաղորդում են, որ թիւրքերը Միջագետքի ճանապարհներն ազատ պահելու համար զօրքեր են կենտրոնացնում Դիարբեքիրում։ Բացի սրանից, նրանք դէպի Սուեզ և Տրապիզոնի շրջանն են ուղարկել մօտ 90 բատալիոն օժանդակ զօրք թնդանօթներով։

— «Рус. Сл.»-ին հեռագրում են Թեհրանից, որ տեղեկութիւն է ստացուած Շիրազի հերոս Ղաւամ-ուլ-Մուլքի մահուան մասին։ Նա իբր թէ մահացել է ձիուց ընկնելուց, բայց հաւանական է համարուում, որ սպանուած լինի գերմանական ագենտների ձեռքով։ Ղաւամ-ուլ-Մուլքը անգլիացիների անկեղծ կողմնակից էր և նա էր, որ ջարդուփշուր արաւ գերմանո-թիւրք կազմակերպութիւնը հարաւային Պարսկաստանում։

— «Ут. Рос.»-ին հաղորդում են, որ ձերբակալուած և Բագու է բերուած Աստրաբադում, Մազանդարանում և Գիլանում յայտնի թուրքմէն Բազար-խանը, պարսից նախկին շահ Մահմէդ-Ալիի վերջին աւանտուրայի աջակիցը։ Վերջին ժամանակս Բազար-խանը զէնք և փամփուշտներ էր գնում Մազանդարանի և Գիլանի աւազակախմբերի համար։

— Վիլսոնի յայտարարութիւնը գերմանական պահպանողական մամուլը պնդում է, թէ պէտք է խզել յարաբերութիւնները Միացեալ Նահանգների հետ և նոյնիսկ պատերազմ սկսել Ամերիկայի դէմ։ Պարիզում կարծում են, որ լրագիրների այսպիսի յօդուածները ձեռնտու են գերմանական կառավարութեան համար։ Վերջինս, ըստ երևոյթին, յոյս ունի, որ Միացեալ Նահանգների դէմ պատերազմի ելնելու դէպքում ինքը կարող է ասել գերմանական ժողովրդին. «Թէև մենք յաղթում ենք բոլոր ճակատներում, բայց այժմ բասի բուն նշանակութեամբ շրջապատուած ենք բոլոր կողմերից, ուստի պէտք է հաշտութեան բանակցութիւններ սկսել»։

— Ստոկհոլմի ֆրանսիական դեսպանը հետևեալ պաշտօնական տեղեկութիւններն է ստացել Պարիզից։ Գերմանական գերիները հաստատում են, որ գերմանացիներն ամագին կորուստներ են կրել Վերդենի մօտ։ Ապրիլի 8-ին, այսինքն Վերդենի ճակատամարտի սկզբից երկու ամիս յետոյ, գերմանական կորուստները կազմում էին 280,000 մարդ, այնպէս որ Վերդենի կռիւները այժմ իսկապէս ամենաարիւնահեղ կռիւներն են հանդիսանում պատմութեան մէջ։

— Շէքսպիրի մահուան 300-ամեակի առթիւ Անգլիայում հանդէսներն արդէն սկսած են անպաշտօն կերպով Սարատֆորդում շէքսպիրեան ցուցահանդէսի բացումով։ Հանդէսները պաշտօնապէս կը սկսուեն մայիսի 1-ին Շէքսպիրի պատուին լինելիք մեծ ինդով Լոնդոնի Մէնշիոն-հաւուզում, ուր ճառ կարտասանի, ի միջի այլոց, Ասկիտը։ Այնուհետև հանդէսներ կը սկսուեն ամբողջ օրը։ Մայիսի 2-ին Դրիւրիլէնեան Թատրոնում տեղի կունենայ շէքսպիրեան ներկայացում, որին կը մասնակցեն մօտ 200 յայտնի դերասաններ։

Խմբագիր՝

Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ ընդարձակ հրատարակութեամբ

Գեղեցկագրդ

● ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ ●

ՌԱԶՄԻ ԵՐԳԵՐԸ

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Անդրանիկի, Դրօի, Համազասպի, Քեռու, Վարդանի, Արամի, Անդրանիկի և իր Քիկեաների, կամաւորների երգման, Անդրանիկ և իր օգնականներն, Քեռին և իր օգնականներ ու բազմաթիւ խմբական և առանձին պատկերներ, ներկայ պատերազմի վերաբերեալ բազմաթիւ նոր երգեր ու ասմունքներ։

Դիմել Թիֆլիսի հայ գրավաճառներին, գումարով գնողներին գեղջ կը լինի, հանապարհածախսը գնողի վրայ է։

Իմ հասցէ՝ Тифлисъ, Авлабаръ, Ходживанская ул. № 16, Х. Теръ-Оганесянцу, կամ Թիֆլիս, ապարան «Մամուլ»։

457 10—1

«ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ»-Ի ԿՈՂՄԻՑ

—

ՓՆՏՐՈՒՈՒՄ ԵՆ

ԲՈՒԼԱՆՈՒԽ Կովի գիւղից, Գրիգոր Բաւոյեան։ Իբր թէ գերի է ընկել ռուսին։ Փնտրողը եղբայրն է—Մովսէս։

ԲՈՒԼԱՆՈՒԽ Հաղազէխ գիւղից Բշերեանները—Յովսէփ Սեղէեան, Գասպար Մանուկեան, Վերդիկ Սարգսեան և Վարդան Մանուկեան։ Էրզրումի գրաւումից յետոյ ռուս կառավարութիւնը բռնել է սրբանց և իբր թէ աշխատեցնում է ճամբաների վրայ, բայց ուր—չգիտենք։ Փնտրողը՝ Մխիթար Բշերեան։

ԷՐԶՐՈՒՄ Հինձ գիւղից, Ստեփան և Զարմայր Յովհաննէսեան (Դանիէլեան) եղբայրները նոր ազատուել են, եկել և փնտրում են իրենց մեծ եղբայրը—Վահան, որ 7 տարի առաջ եկել է Կովկաս։ Մա եղել է կամաւոր՝ Քեռու խմբում, իսկ այժմ դուրս է եկել։

ՎԱՆ Թիւթունջի Աբգար Խաչատրեան կամաւոր է եղել Իշխանի խմբում։ Մեծ գաղթին Իգդիրում հիւանդ է լինում, յետոյ, իբր թէ, զրկել են նրան Թիֆլիսի հիւանդանոցները։ Փնտրողը նրա մայրն է—Փեփրոն։

ՈՐԲԵՐԸ

ԽՆՈՒՍ Հարամիկ գիւղից, Մարիամ Տէր-Սողոմոնեանը երկու ամիս առաջ կորցրել է իր որդուն—Անդրանիկ 9 տարու՝ Մուշի Ս. Կարապետ վանքին մօտերը։

ՎԱՆ Տիգրան 13 և Թաղերունի 6 տարու Խաչատրեան եղբայրները, որոնց ժամանակին Էջմիածնից փոխադրել են Թիֆլիսի հիւանդանոցները։ Մեռած են թէ կենդանի՝ խնդրում ենք յայտնել։ Փնտրողը նրանց մայրն է—Սրբուհի։

ՎԱՆ Զաուշ-Բաշու Թաղից, երբ-ոչ 10 և Բիրսաբէ 7 տարու Աբշակեան (Դալալեան) քոյրերը, մեծ գաղթին Էջմիածնում կորուած։ Փնտրողը նրանց մայրն է—Հայկանուշ։

Յայտնել՝ Թիֆլիս, Բեբուտովսկայա, № 30, «Տեղեկատու Բիւրօ»։

455 1—1

Կիրակի, վանքի բակում

ԿՈՐՑՐԵԼ ԵՄ

մի քսակ, որի մէջ կար 125 ռ. փող և անհրաժեշտ թղթեր. խնդրում եմ գտնողին վերադարձնել ինձ թղթերը հետեւեալ հասցէով՝ Ներսիսեան դպրոց, Յովսէփ Աբաղեանին։

458 1—1

Ամսիս 15-ին, երեկոյեան ժամը 5-ին, Նիկոլաևսկի փողոցից մինչև կայարան տրամուայով գնալիս

ԿՈՐՑՐԵԼ ԵՄ

ԾՈՑԻ ԿԱՇԻԷ ՊՈՐՏՄԱՆԷ

որի մէջ կային փող և զանազան հարկաւոր գոկումենտներ. ուստի խնդրում եմ տանողը կամ գտնողը բարի լինի գոկումենտները վերադարձնել պատի միջոցով, որով ինձ մեծ բարիք արած կը լինի։ Հասցէ. Десятиновская ул. № 24, Мкртичу Араратянцу. 451 3—3

ԾԱԽԻՈՒՄ Է ՄԻ ՏՈՒՆ

Խոջիվանքի յետևը, երկաթուղու գծին կպած, Բէհբութեանների նախկին կալուածքում։ Դիմել. Զերքեզովսկի, № 67, տանտիրոջը։

441 6—3

Լրզրումի նահանգի Թորթում գտնուող Շիրիկ գիւղի Տէր-Յակոբ Բէշիշեանի որդիք՝ Մանուկ, Արշակ, Սղնաւուր և նրանց կանայք՝ Եղիսաբէթ, Հերիքնազ, Զբրաքսիա և զաւակները՝ Հմայեակ, Բիւզանդ, Յովհաննէս, Խաչատուր, Տիրատուր, Փարէս և Սողոմէ փոքրիկներով միասին և առհասարակ Բէշիշեան գերդաստանի անդամները՝ Փիլոս Գրիգորեան, Հմայեակ, Լևոն և նրանց հայրը՝ Յակոբ փնտրուում են. փնտրողն է Տիգրան Տէր-Յակոբեան Տէրտէրեանցը. խնդրում եմ իրենք կամ բրեսէր ծանօթները, եթէ գիտեն, ասեն ինձ տեղեկութիւն այս հասցէով։

Булочная и кондитерская Бр. Терторянъ, Карасубазаръ, Ильинская ул., соб. д., № 9.

Յարգանօք՝ Տիգրան Տէրտէրեան

428 3—3

Վաճառւում է Ե. ԷԼԻԲԷԿԵԱՆԻ

Աշխարհագրական Ատլասը

Հայ դպրոցների համար։ Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին Ներսիսեան դպրոց։

205 10—9

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

ԶԻԼԲԵՐՇԱՑ-ՇԱՊԵԼՆԻԿՈՎԱՑԻ

Ելիսաւետինսկայա փողոց, № 7. Բ-Մանդի դիմաց, Վօրոնցովի արձանի մօտ։ Ընդունում են մասնագէտ բժիշկները, առաւ. ժ. 8-ից—երեկ. 8 ժամը։ Գարելի է բժիշկ բան ցանկութեան առանց բարամաքինչի և ասմունքը հանել առանց ցաւի։ Թմրեցուցիչ գեղերի ներգործութեամբ։

Ատամնաբուժարանն ունի արհեստանոց, որտեղ կատարւում են պատէրներ ամեն տեսակի արհեստականաց համար. պատէրները նոր բարում են ցաւ։ Արհեստական ատամները 24 սկսած 1 ռ. 50 կոպեկից և վեր։ 25—9

ՊԱՀԵՍՏ ՄԵՏԱՔՍԷ ԵՒ ԲՐԴԷ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ՄՈՍԷՍ ԿԱՐԵԼԻԻ Փոխադրուած Վարշաւայից Թիֆլիս

Սեփական տնից փոխադրուած է իշխ. Վորոնցովի արձանի մօտ, Միքայէլեան փող. № 1.

Երկուշաբթի, ապրիլի 18-ից, ամբողջ Զատիկի շաբաթը, առանձնապէս էժան ծախուում են հետևեալ ապրանքները

Բրդէ կտորներ, յարմար է կոստիւմների ռաջայ գինը 4 ռ. և աւելի էր, իսկ այժմ 2 ռ. 35 կ. Վելիտ պան-թաւիշ, արժէր 2 ռբ. 50 կոպ. այժմ միայն՝ 1 ռ. 10 կ., 1 ռ. 20 կ., 1 ռ. 40 կ. արշինը։ Ռադամէսի արշինը՝ 65 կոպեկից։

Մետաքսէ կտորների նախկին արժէքն էր 2 ռբ. 50 կոպեկից մինչև 2 ռ. 80 կոպ. իսկ այժմ միայն 1 ռ. 25 կոպեկից մինչև 1 ռ. 40 կոպ.։ Մետաքսէ շարֆեր, մօտ 3 և 4 էս արշին կրկնակի լայնութեամբ, գինն է 50 կոպ. հատը։

Էժան գներ են նշանակուած նոյնպէս նոր ստացուած ԼԱՅՆ ՏԱՓՏԻ, ՍԵՒ ԱՏԼԱՍԻ, գունաւոր ԼԵԻԱՆՏԻՆԻ վրայ։

ՍՍՏԻՆ ՊՐԻՆՑԵՍՍԸ, մեսալին կրկնակի լայնութեամբ։

Բազմաթիւ նուրբ կտորներ, յարմար աստառի և բլուզների համար։

958

Բամբակէ սարպինկա, և բազմաթիւ ամառային գործուածներ։ 1—1

Հրատարակութիւն «Հայ» Ընկ.

Дозв. воен. цензв.

Типографія „МАМУЛЪ", Лорисъ-Меликовская ул. № 22.

digitised by A.R.A.R.@